Ազգ
Azg
28 ՕԳՈՍՏՈՍ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 147(4999)
ISSN: 1829-1651

# Հանիրավի արված հայտարարություններ, ըստ Գալուստ Սահակյանի

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Վերջին մի քանի օրը օրակարգ է մտել մի խոսակցություն, թե աշնանային նստաշրջանում անցած տարվա բյուջեի կատարողականը քննարկելու ժամանակ ԲՀԿ-ն ամեն ինչ անելու է, որ 2011-ի կատարողականը չհաստատվի եւ վարչապետ Տիգրան Սարգսյանի կառավարությանը անվստահություն հայտնվի: Արդեն տասնյակ վերլուծականներ են գրվել այդ մասին, ԲՀԿ գործիչներն իրենց հրապարակային խոսքում (Տիգրան Ուրիխանյան, Նաիրա Զոհրաբյան) չեն ժխտում, որ կուտակված խնդիրների լուծումը իրենք տեսնում են այլ կառավարությամբ, այդպիսով կրքեր թեժացնելով այս թեմայով: Ոմանք սա դիտարկում են նախագահական ընտրությունների համատեքստում, եւ անգամ խոսքը տանում-հասցնում են այնտեղ, թե վարչապետին զոհաբերելը կարող է լինել այն գինը, որով ԲՀԿ-ն կհամաձայնի նոր կոալիցիոն համաձայնագրի կամ էլ կհայտարարի, որ պաշտպանելու է Սերժ Սարգսյանին, ուրիշները դա բացատրում են Ռոբերտ Քոչարյանի ստվերային դերակատարությամբ: Մենք դեռ կհասցնենք վերլուծել իրավիճակը, այսօր այդ եւ օրակարգում առկա այլ մեկ-երկու հարցի վերաբերյալ ներկայացնենք ՀՀԿ փոխնախագահ **Գալուստ Սահակյանի** տեսակետները:

Բյուջեի կատարողականի ժամանակ այդպիսի իրավիճակը նա հնարավոր համարո՞ւմ է. «Իհարկե ոչ: Նման խնդիր մեզանում չի քննարկվում եւ առաջիկայում էլ չի քննարկվելու»: Գ. Սահակյանն ասում է, թե այդ հարցի շուրջը երկար մտածելու կարիք չկա, վարչապետ կամ կառավարություն նշանակելիս վճռական դեր ունի Ազգային ժողովը, որտեղ ՀՀԿ-ն քաղաքական մեծամասնություն է ու՝ «Մի քիչ կոշտ ասեմ՝ առանց օժանդակության կկարողանա իրականացնել էն ռազմավարությունը, որն ինքն ընդունել է»: Այս խոսակցություններին ՀՀԿ փոխնախագահը թեթեւ է վերաբերվում. «Ցանկացած կուսակցություն խնդիր ունի նաեւ իշխանության գալ եւ իր մտահղացումները հասարակության մեջ իրականացնել, դա է կուսակցության մոդելը, եւ յուրաքանչյուր կուսակցություն ինքն է որոշում, թե ո՞ր ժամանակաշրջանում ո՞ր խնդրի վրա ավելի մեծ ուշադրություն դարձնել», ասում է Գ. Սահակյանը՝ ԲՀԿ-ից հնչող այս տեսակետների վերաբերյալ, հակադարձելով, թե ՀՀԿ-ն արդեն ապացուցել է, որ կարողանում է հարցերը համախումբ լուծել բոլոր կուսակցությունների հետ, դա երբեմն հաջողվում է, երբեմն ոչ.

Տես էջ 3

# ՌԱԿ-ը մասնակցում է ՏԻՄ ընտրություններին

Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը (ՌԱԿ ՀՎ) որոշում է ընդունել ակտիվ մասնակցություն ունենալ Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) առաջիկա ընտրություններին: Որոշումը ՌԱԿ ՀՎ-ի կողմից ընդունվել է այս տարվա հուլիսին կուսակցութեան վարչության ընդլայնված նիստի ժամանակ:

Այսպիսով կուսակցությունը, որն իր միավորմամբ ամրապնդել է իր դիրքերը, որոշում է ընդունել վերադառնալ ակտիվ քաղաքական գործունեության, որի նպատակն է կուսակցության տեղը հաստատել Հայաստանի քաղաքական դաշտում, որը հանգամանքների բերումով 2003 թ.-ից ի վեր թափուր էր մնացել: Լինելով հայ ազգային-ազատական-ժողովրդավարական գաղափարախոսությունը կրող միակ քաղաքական ուժը հայ իրականության մեջ, ՌԱԿ-ը վայելում է հայ մտավորականութեան, ինչպես նաեւ ողջամիտ քաղաքացիների մի ստվար զանգվածի աջակցությունը եւ իր գործունեությամբ նպատակ է հետապնդում ընդլայնել իր համախոհների եւ համակիրների բանակը:

ՌԱԿ Հանրապետական վարչությունը որոշում է ընդունել իր թեկնածուներին առաջադրել Սյունիքի մարզում (ք. Սիսիան), Վայոց Ձորի մարզում (ք. Եղեգնաձոր), Արարատի մարզում (ք. Մասիս, գ. Այգեստան), Արագածոտնի մարզում (ք. Աշտարակ), Գեղարքունիքի մարզում (ք. Սեւան, Լոռու մարզ (ք. Ստեփանավան, ք. Տաշիր), գյուղապետական եւ ավագանու անդամի պաշտոններում:

Հայաստանի այլ մարզերի քաղաքներում եւ գյուղերում ՌԱԿ-ի թեկնածուների եւ համակիրների առաջ քաշման մասին կուսակցության Հանրապետական վարչությունը կհայտնի լրացուցիչ:

ՌԱԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱՐԱ

# Դավութօղլուն լիազորությունները գերազանցե՞լ է



ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**Թուրքախոս երկրների համագործակցության խորհրդի բիշքեկյան գագաթաժողովը կուրյոզներ արձանագրեց: Նախ, Թուրքիայի նախագահ Գյուլը «ականջախոռոչի հետ կապված առողջական խնդիրներ» ունեցավ, շտապ ընդհատեց այցը եւ վերադարձավ Անկարա: Այդ առթիվ նրան «շուտափույթ ապաքինում են ցանկացել» մի շարք երկրների՝ Պակիստանի, Թուրքմենստանի, Ադրբեջանի նախագահները, Պաղեստինի ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբասը: Գյուլին «ցավակցող» երկրների շարքում, սակայն, Ղրղզստանը չկա, թեեւ դիվանագիտական պատշաճությունը պահանջում էր, որ, իբրեւ հյուրընկալ կողմ, Բիշքեկն առաջինը մտահոգված լիներ «թուրքական աշխարհի առաջնորդի առողջությամբ»: Գյուլի «ականջախոռոչային հիվանդությանը» չեն արձագանքել նաեւ ՆԱՏՕ-ի անդամ երկրները՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ: Թեեւ «Ասադին շուտափույթ հեռացնելու հետ կապված հարցերը» պետքարտուղար Քլինթոնը քննարկել է հատկապես Թուրքիայի հետ:**

Տես էջ 8

# Հայոց ցեղասպանությանը նվիրված բաժին ֆրանսիական դասագրքերում

Ֆրանսիայի՝ սեպտեմբերի 4-ից սկսվող նոր ուսումնական տարում դպրոցական դասագրքերում «Հայոց ցեղասպանություն» վերնագրով բաժնի ընդգրկումը դժգոհություն է առաջացրել Թուրքիայում: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, CNNTurk-ն այդ կապակցությամբ հայտնել է, որ թեեւ Ֆրանսուա Օլանդի՝ Ֆրանսիայի նախագահի ընտրվելուց հետո Անկարայում հույս ունեին, որ Հայոց ցեղասպանությունը քրեորեն պատժելու օրինագծի առնչությամբ լարված թուրք-ֆրանսիական հարաբերությունները վերջնականորեն կբարելավվեն, սակայն ցեղասպանության թեման դասագրքերում ընդգրկելու՝ Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզիի օրոք սկսված նախաձեռնությունը կյանքի կոչվեց Օլանդի օրոք:

Ֆրանսիայի միջնակարգ դպրոցների երրորդ դասարանի պատմության եւ աշխարհագրության դասագրքերում Հայոց ցեղասպանությանը նվիրված հատուկ բաժին է ներառվել: Որոշ թուրք վերլուծաբաններ կարծիք են հայտնել, որ Ֆրանսիայի նախագահ Օլանդը հաստատակամ է Հայոց ցեղասպանությունը քրեորեն պատժելի դարձնող օրինագծի ընդունման հարցում:

# Էրզրումի հայկական եկեղեցին՝ ախոռի վերածված



**Օգտվելով «սոնդակիկա» թուրքական կայքից՝ Կահիրեում լույս տեսնող «Ջահակիր» ազգային, գրական եւ ընկերակյին շաբաթաթերթի օգոստոսի 9-ի համարը տեղեկացնում է, որ Էրզրումի Ազիզիյե շրջանում գտնվող Գեզ գյուղի հայկական եկեղեցին որպես ախոռ է օգտագործվում:**

**Եկեղեցին տարբերաբար թիրախ է ծառայել գանձ որոնողների շրջանում, գողացվել է բառացիորեն հնարավոր ամեն ինչ՝ մուտքի դռնից մինչեւ ներսի սրբապատկերները:**

**Քաղաքացիները, ըստ լրատվության, մտահոգություն են հայտնել նահանգի մշակույթի եւ զբոսաշրջության վարչությանը՝ պատմական կառույցը անուշադրության մատնելու համար:**

**«Կառուցման հստակ տարեթիվը հայտնի չէ, սակայն տեղեկություններ կան, որ եկեղեցին կառուցել են հայերը: Եկեղեցու պատերին եւ առաստաղին որեւէ նկար կամ նշան չի մնացել», նշել են նրանք:**

Հ. Ծ.

# Նորի՞ց պարտակում

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Վահե Ավետյանի սպանության գործի նախաքննության արդյունքները երեկ ներկայացրին «Վահե Ավետյան» հասարակական շարժման նախաձեռնող խումբը, «Պահանջում ենք պատժել Հարսնաքարում տեղի ունեցածի բոլոր մեղավորներին» քաղաքացիական նախաձեռնության անդամները եւ Վահե Ավետյանի իրավահաջորդի փաստաբանները:

Փաստաբան **Տիգրան Եգորյանը**, անդրադառնալով գործի նյութերում առկա՝ դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը, ասաց, որ փորձաքննությունում արձանագրված տվյալների պարագայում արվել է դրանցից չբխող, ակնհայտ սխալ հետեւություն, որ Վահե Ավետյանը ստացել է ծանր մարմնական վնասվածք, որը վտանգ է ներկայացնում կյանքի համար, իսկ տվյալ դեպքում հանգեցրել է մահվան: «Չհամաձայնելով այս հետեւությանը եւ խորհրդակցելով ոլորտի լրջագույն մասնագետների հետ՝ մենք, ի թիվս բազում այլ միջնորդությունների, պահանջել ենք նախաքննություն իրականացնող մարմնից նշանակել կրկնակի հանձնաժողովային փորձաքննություն՝ հրավիրելով հանրապետության բոլոր հիվանդանոցների նյարդավիրաբուժական բաժինների ղեկավարներին, որպեսզի հնարավոր լինի գնահատել, թե արդյոք մենք գործ ունենք տվյալ դեպքում մահվան հանգեցրած վնասվածքների, թե՞ ամեն դեպքում կյանքի հետ անհամատեղելի վնասվածքների հետ: Նախաքննության մարմինը՝ հանձին քննչական խմբի ղեկավար **Ռուբեն Մկրտչյանի**, առանց հիմնավոր պատճառաբանության, մերժել է մեր միջնորդությունը՝ փաստացի զրկելով մեզ նախաքննության օբյեկտիվության նկատմամբ կասկածները փարատելու օրենսդրական հնարավորությունից:

Համակարգչային հետազոտմամբ արձանագրվել են հետեւյալ բժշկական տվյալները. հավասարաչափ լայնացած եւ միջին գծով ֆիքսված բիբեր, կոռնեալ ռեֆլեքսների բացակայություն, ցավային գրգիռների նկատմամբ ռեակցիայի բացակայություն, գլխուղեղի մոտ 4,0 սմ դիսլոկացիա համախտանիշ աջից ձախ: Վահե Ավետյանի ախտորոշումը եղել է դիֆուզ աքսոնալ ախտահարում՝ գլխուղեղի մահ, այն է՝ գլխուղեղի կենսագործունեության լրիվ եւ անդառնալի դադարում, ինչը քրեաիրավական առումով համարժեք է մարդու մահվան»:

«Հատկանշական է, որ քրեական գործի նյութերում առկա են նաեւ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ վեց մեղադրյալներից հինգը, բացի մատուցողից, այդ օրն ուղեկցել են ԱԺ պատգամավոր, ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանին Երեւանից Սեւան գնալու եւ հետ վերադառնալու ընթացքում: Սա ապացուցում է, որ հակառակ գործում առկա կեղծ պայմանագրերի եւ ոստիկանության ՀԿԳ քննչական վարչության պետ Վահագն Հարությունյանի պնդումների՝ այս մարդիկ եղել են Ռուբեն Հայրապետյանի անձնական թիկնազորի անդամները», ասաց փաստաբան **Լուսինե Հակոբյանը**:

Տես էջ 2

*1-ին էջից*

Նա հավելեց, որ այս կապակցությամբ միջնորդել են քննչական խմբին որպես կասկածյալ ներգրավելու Ռուբեն Հայրապետյանին եւ պատշաճ հարցաքննության ենթարկել նրան, քանի որ նրան որպես վկա հարցաքննած քննիչ Ռուբեն Մկրտչյանի հարցաքննությունը պարզապես սուրճի գավաթի շուրջը մտերմիկ խոսակցություն էր հիշեցնում. «Ի պատասխան մեր այս միջնորդության՝ քննիչ Ռ. Մկրտչյանը նշել է, որ օրենսգիրքը «որպես կասկածյալ ներգրավելու» հասկացություն չի նախատեսում: Մինչդեռ համաձայն քրեադատավարական իրավունքի տեսության՝ կասկածյալն այն անձն է, որը կասկածվում է հանցանք կատարելու մեջ:

նիսկ մեր բողոքին: Որոշումը մեզ հանձնվել է օգոստոսի 23-ին եւ մեկ օր հետո մենք ներկայացրել ենք մեր բողոքը դատախազություն: Դատախազությունն իր նման գործելակերպն արդարացնում է այն անհեթեթ պատճառաբանությամբ, թե քննիչը գործին է կցել նաեւ մի տեղեկանք, ըստ որի փաստաբանները հրաժարվել են մերժման որոշումն առձեռն ստանալուց: Իրականում այս տեղեկանքը սույն քրեական գործում առկա հերթական կեղծ փաստաթուղթն է»:

Փաստաբանների տեղեկացմամբ՝ կեղծվել են մեղադրյալների իբրեւ «Հարսնաքար»-ի անվտանգության աշխատակիցներ հանդիսացող պայմանագրերի ստորագրությունները: Դա ակն-

վերծանումից պարզ է դարձել, որ միջադեպից հետո ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՖՖ նախագահ Ռ. Հայրապետյանը զանգահարել է Նորայր Հայրապետյանին, եւ Հայրապետյանն իր ցուցմունքում նշել է, որ ցանկացել է ճշտել դեպքի մանրամասները, սակայն ցուցմունքով այդ գիծը չի շարունակվել, մոռացության է մատնվել: Սակայն հետո ներկայացվում է, թե Ռուբեն Հայրապետյանը դեպքի մանրամասներից տեղյակ չէ, որը խիստ հակասական եւ կասկածելի է:

Մարդու իրավունքների նախկին պաշտպան **Լարիսա Ալավերդյանն** իր հերթին հավելեց. «Հասարակությունն այս երկուսուկես ամսվա ընթացքում գոնե պետք է տեսներ, որ դաժանությամբ կազ-

# Նորի՞ց պարտակում

Տվյալ դեպքում առկա էին անհրաժեշտ եւ բավարար բոլոր հիմքերը՝ կասկածի տակ առնելու Ռ. Հայրապետյանի առնչությունը վերոնշյալ հանցագործությանը»:

Ընդգծենք, որ սույն թվականի օգոստոսի 20-ին քսանից ավելի միջնորդություններ են ներկայացվել նախաքննություն իրականացնող մարմնին, սակայն նույն օրը՝ միջնորդություններն ստանալուց ընդամենը մի քանի ժամ անց, քննիչ Ռուբեն Մկրտչյանն ամբողջությամբ մերժել է դրանք: Ինչպես իր հերթին նշեց փաստաբան **Տիգրան Եգորյանը**, ներկայացված միջնորդությունները պարունակում էին կոնկրետ կասկածներ եւ պահանջներ, որոնք քննիչը պարտավոր էր բավարարել դրանք հերքելու եւ համապատասխանաբար նախաքննության բազմակողմանիության եւ օբյեկտիվության հարցը կասկածից դուրս դնելու համար. «Նույն օրը նա գործի մեղադրական եզրակացությունն ուղարկել է դատախազություն, որն իր հերթին անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 267-րդ հոդվածով սահմանված նորմի պահանջը, համաձայն որի մենք ունենք մեզ հանձնելու պահից սկսած երկօրյա ժամկետում այդ որոշումը դատախազին բողոքարկելու իրավունք, դրսեւորելով սույն գործի շահերից չբխող անհասկանալի փութաջանություն, գործը ստանալուց հետո երեք օր անց՝ օգոստոսի 23-ին, ուղարկել է դատարան՝ չսպասելով նույ-




հայտ է դառնում, երբ համադրում են մեղադրյալների աշխատանքային պայմանագրերի եւ ցուցմունքների տակ դրված ստորագրությունները: Հատկանշական է, որ նախաքննական մարմինը մերժել է դատաձեռագրաբանական փորձաքննություն նշանակելու միջնորդությունը, եւ ինչպես փաստաբան **Լուսինե Հակոբյանն** ասաց, եթե նախաքննությամբ հաստատվի, որ մեղադրյալները Հայրապետյանի թիկնազորի անդամներն են, ապա պարզ կդառնա, որ այդ ամենը կատարվել է նրանց տիրոջ իմացությամբ:

Հետաքրքրական մի փաստ եւս, ինչպես բանախոսները տեղեկացրին, հեռախոսազանգերի

մակերտված եւ անպատժելիության շվաքի ներքո սադիստական հանցագործությունը ուսումնասիրվել եւ պատժվել է, մենք տեսնում ենք հակառակ արդյունքը՝ ոչնչացվել են հիմնական ապացույցներն ու հետքերը: Այսինքն սա սադիստների խրախուսման մի ճանապարհ է, որը հանդուրժելը նշանակում է երկրում քրեական կարգեր սահմանել: Լ. Ալավերդյանը նաեւ ասաց. «Կարծում եմ նրանք նույն մարդիկ են, որոնք մարտի 1-ին սպանություն են կատարել: Ո՞վ կարող է ասել «ոչ»: Չէ՞ որ մարտի 1-ի սպանություն կատարողները եւս մնացել են ազատության մեջ, իսկ հիմա էլ այս հանցագործությունն է պարտակվում»:

# Սեպտեմբերի 31-ին էթիկայի հանձնաժողովը կքննարկի առաջին դիմումը պատգամավորի վարքի վերաբերյալ

Սեպտեմբերի 31-ին, ժամը տասին Ազգային ժողովի 329 սենյակում տեղի կունենա Ազգային ժողովի նորաստեղծ էթիկայի հանձնաժողովի նիստը, որի օրակարգում երկու հարց է ընդգրկված՝ կանոնակարգի հաստատում, նախապես դրա վերաբերյալ առաջարկները քննարկելով, եւ քաղաքացի Արթուր Ջադոյանի դիմումի հիման վրա՝ հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանի զեկույցը: Թե ո՞վ է Արթուր Ջադոյանը եւ ո՞ր պատգամավորի վարքի վերաբերյալ է բողոք ներկայացրել՝ չկարողացանք պարզել, քանի որ հանձնաժողովի նախագահ Դ. Հարությունյանը Հայաստանում չէր, իսկ նրա աշխատակազմից ընդամենը մասնացույց արեցին կանոնակարգը, ըստ որի մանրամասնված է, թե ո՞վ կարող է դիմել հանձնաժողով, եւ այն, որ նիստն




ըստ կանոնակարգի փակ է ընթանալու:

Հիշեցնենք, որ էթիկայի հանձնաժողովը դիմումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում պետք է կամ սկսի դիմումի քննությունը, կամ մերժի, իսկ հարցի քննությունը պետք է ավարտի երեսնօրյա ժամկետում (հասուկ որոշմամբ քննությունը կարող է երկարաձգվել 20 օրով):

Ճիշտն ասած՝ մի կողմից լավ է, որ այսպիսի հանձնաժողով է ստեղծվել, ու մեր պատգամավորները չեն կարող իրենց անպատժելի պատկերացնել, մյուս կողմից էլ, հայաստանյան իրողությունները նկատի առնելով, չի կարելի վստահ լինել, որ այս հանձնաժողովը մահակ չի դառնա անցանկալի կամ իշխանությանը քննադատող պատգամավորների համար:

Կապրենք, կտեսնենք:

Ս. Խ.

ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## Երեւանի բոլոր դպրոցները կջեռուցվեն

**Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը երեկ տեղի ունեցած աշխատանքային խորհրդակցության ժամանակ համապատասխան կառույցների պատասխանատուներին հանձնարարել է մինչեւ նոյեմբերի 15-ը ավարտել քաղաքապետարանի ենթակայության 17 եւ կրթության եւ գիտության նախարարության ենթակայության 9 չջեռուցվող դպրոցների ջեռուցման համակարգերի անցկացումն ու դրանց լիարժեք գործարկումը: Ըստ Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության, նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ, մինչեւ հերթական ջեռուցման սեզոնի մեկնարկը, մայրաքաղաքի դեռեւս չջեռուցվող բոլոր դպրոցները կապահովվեն ջեռուցմամբ:**

**Տարոն Մարգարյանը նշել է, որ մինչ 2011-ը ամբողջությամբ ավարտել են մանկապարտեզների ջեռուցման աշխատանքները, դա համարելով մեծ ու կարեւոր ձեռքբերում: Չջեռուցվող դպրոցները ջեռուցմամբ ապահովելուց հետո, հետագա ծրագրերում կընդգրկվեն նաեւ չջեռուցվող մշակութային օջախները, գրադարաններն ու մարզադպրոցները:**

## Վերգետնյա անցումներ ու կանաչ տարածքներ

**Սեպտեմբերի 1-ին ընդառաջ Երեւանի քաղաքապետը հանձնարարել է քայլեր ձեռնարկել 2012 թվականի ծրագրերի շրջանակում նոր կառուցվող վերգետնյա հետիոտն անցումները մինչեւ սեպտեմբեր 1-ը բնակիչներին հանձնելու ուղղությամբ: Քաղաքապետը հատկապես կարեւորել է ուսումնական հաստատությունների մոտակայքում կառուցվող անցումների շահագործման հանձնումը:**

**Մայրաքաղաքի կանաչ տարածքների պահպանման եւ ընդլայնման շրջանակում Տարոն Մարգարյանը հանձնարարել է խիստ հսկողություն սահմանել մասնավորապես Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հարակից, ինչպես նաեւ Նորքի, Դալմայի այգիների եւ անտառաշերտով պատված այլ տարածքների ոռոգման ցանցերի գործարկման եւ ոռոգման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ՝ անկախ, թե ում ենթակայության ներքո են դրանք: Քաղաքապետը հանձնարարել է նաեւ կազմակերպել Հրազդանի կիրճի տարածքի սանիտարական մաքրման աշխատանքները եւ մշտական հսկողություն սահմանել պատշաճ վիճակի ապահովման ուղղությամբ:**

## Կանգառներում մեքենաների կայանումը բացառելու քայլեր

**Տրանսպորտի վարչության պետը զեկուցել է, որ արտաքին եւ ներքին սանիտարական ոչ պատշաճ վիճակի համար նախորդ շաբաթվա ընթացքում երթուղիներից ժամանակավորապես դուրս է բերվել 10 մեքենա, ինչպես նաեւ ձեռնարկվել են նաեւ միջոցներ՝ չթույլատրված վայրերում, մասնավորապես հասարակական տրանսպորտի կանգառներում եւ կամարանցումներում ավտոմեքենաների կայանումը բացառելու: Զեկուցվել է նաեւ, որ ընթացքի մեջ է Երեւանի ներքաղաքային ավտոբուսային եւ միկրոավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղիների մրցույթների անցկացումը:**

## Կլուսավորվի Վարդան Մամիկոնյանի արձանը

**Անդրադառնալով մայրաքաղաքում առկա արձանների մինչեւ լուսաբաց լուսավորությամբ ապահովելու քաղաքապետի հանձնարարականին՝ «Երքաղլույս» ընկերության տնօրենը զեկուցել է, որ գույքագրված 63 արձանների լուսավորության ժամերը երկարացվել են, եւ այժմ արձանները լուսավորվում են մինչեւ լուսաբաց: Զեկուցվել է նաեւ, որ աշխատանքներ են տարվում հնարավորին սեղմ ժամկետում Վարդան Մամիկոնյանի արձանի գեղարվեստական լուսավորման աշխատանքները ավարտելու:**

Ա. Ս.

## Սիրիահայերը ցանկանում են կրթվել հայաստանյան բուհերում

**Սիրիայում սկսված պատերազմական դրության հետեւանքով սիրիահայ բազմաթիվ ընտանիքներ վերադարձել են հայրենիք՝ մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու:**

**«Հայազն» միության՝ Հայաստանի կառավարությանն ուղղված նամակում նշվում է, որ սիրիահայ երիտասարդներից շատերը ցանկանում են ուսում ստանալ հայրենիքում, սակայն ներկայումս նրանցից քչերն ունեն հնարավորություն պետական բուհերի ուսման վարձերն ինքնուրույն վճարելու, քանի որ պատերազմական դրության պատճառով նրանք Սիրիայից հեռացել են իրենց ունեցվածքը թողնելով այնտեղ:**

**«Հայազն» միությունն առաջարկում է հատկացնել պետպատվերով տեղեր Սիրիայից հայրենադարձ հայ ուսանողների համար:**

Ի. Պ.

## Նախընտրական խախտումներ Վանաձորում

**Վանաձորի քաղաքապետի թեկնածու, անկուսակցական Կարեն Թումանյանի նախընտրական շտաբից տեղեկացանք, որ որոշ ուժեր խոչընդոտում են թեկնածուի քարոզարշավի իրականացմանը: Օգոստոսի լույս 26-ի գիշերը Վանաձորում պատռվել են Կարեն Թումանյանի նախընտրական պաստառները, ամսի 26-ին անսթափ վիճակում մի անձնավորություն ահաբեկել է հանդիպման մասնակիցներին, վիրավորել նկարահանող օպերատորին, հավաքված վանաձորցիներին ու դիմել փախուստի: Նախընտրական շտաբը Կարեն Թումանյանի համախոհների անունից կոչ է անում իրավապահ մարմիններին՝ հայտնաբերելու միջադեպի կազմակերպիչներին, պատվիրատուին ու կատարողներին:**

Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

# Հալեպից ժամանած թեքեյանցի երեխաները «Հասմիկ» ճամբարում



«**Ազգի**» ընթերցողները տեղյակ են, որ ՀՀ կառավարության աջակցությամբ Հալեպից եւ Դամասկոսից հայ երեխաները հատուկ չվերթերով եկել են Հայաստան՝ երկշաբաթյա ճամբարային հանգստի ու շրջապտույտի: Այդ երեխաների թվում են նաեւ Հալեպի Թեքեյան մշակութային միության սաները, որոնք արդեն մեկ շաբաթ է, ինչ իրենց հանգիստը անցկացնում են Հանքավանի «Հասմիկ» ճամբարում: Երեկ Ռամկավար ազատական կուսակցության փոխատենապետ Կարեն Կակոյանը, ՀԹՄՄ վարչության անդամ Մարիետա Մակարյանը եւ «**Ազգ**» օրաթերթի լուսանկարիչը այցելեցին թեքեյանցիներին: Հանքավանի չնաշխարհիկ բնության գրկում, անտառներով ու սարերով շրջապատված գողտրիկ մի վայրում է գտնվում «Հասմիկ» ճամբարը, որտեղ Հալեպից ժամանած 23 թեքեյանցիներ վազում էին, խաղում, կատակում, վայելում անկրկնելի բնությունը, շնչում մաքուր օդ եւ իրապես հանգստանում: Թեքեյանցիներն իրենց պատասխանատուներ Սոսի Պլըքեանի, Վարդեվառ Մուղալյանի, Անի Չալյանի ուղեկցությամբ ճամբարի մուտքի մոտ դիմավորեցին հյուրերին, որից հետո սկիզբ առավ ջերմ ու մտերմիկ զրույց ճամբարում անցնող իրենց առօրյայի, տպավորությունների ու նաեւ հարազատներին արդեն իսկ կարոտած՝ նրանց հուզումների մասին:

**Սոսի Պլըքեանը** Հալեպից է, ավարտել է Դամասկոսի պետական համալսարանը եւ ներկայումս աշխատում է Հալեպի Թեքեյան մշակութային միությունում՝ Զավեն Եկավյանի հաստատած «Գյուլբենկյան» գրադարանում եւ մշտապես շփվում է երեխաների հետ, հասկանում նրանց հոգեբանությունը: Եվ հենց այդ էլ հաշվի առնելով, Հալեպի ԹՄՄ վարչությունը Սոսիին է վստահում Հայաստան մեկնող երեխաների պատասխանատվությունը: Նրա մյուս երկու օգնականներից Անին Հալեպի համալսարանի հայագիտական ամբիոնի շրջանավարտ է եւ աշխատում է Սոսիի հետ նույն գրադարանում: Վարդիվառը լուսանկարիչ է ու բաց չի թողնում մայր հայրենիքում ոչ մի գեղեցիկ տեսարան ու պահ, դրանք անմահացնում է թեքեյանցիների առօրյայի հետ մեկտեղ:

Սոսին «**Ազգին**» պատմեց. «Երբ լուրը ստացանք, որ Հայաստանի կառավարությունը որոշել է երեխաներին հայրենիք հանգստի տանել, շատ ոգեւորվեցինք: Սակայն այդ ամենն այնքան արագ եղավ, որ միության անդամները մասնակցության հրավերն ստացան միայն հեռախոսով եւ ովքեր ունեին սիրիական անձնագրեր, դրանց էլ ցուցակագրեցին: Իհարկե, ցանկացողները շատ-շատ էին, սակայն այդ օրերին անձնագրային գրասենյակները չէին աշխատել ու փաստաթղթեր չէին կարող տրամադրել: Իհարկե, եղել են ծնողներ, որոնք շատ մտահոգված են եղել իրենց զավակներին Հայաստան մենակ ուղարկելու փաստով, քանի որ կապ չի եղել եւ անգամ չեն կարողացել ինտերնետի միջոցով տեղեկանալ ճամբարի մասին: Իսկ երբ որոշակի ճշտություն է մտցվել, ցանկացողների թիվը բազմապատկվել է, սակայն այս դեպքում էլ թիվը սահմանափակվել է, քանի որ ասվել է միայն 300 երեխա կարող են տեղափոխել Սիրիայից Հայաստան, ասում էր Սոսին: Ի դեպ, արդեն ճամբարում գտնվող 23 թեքեյանցիներին միացել են երկու օր առաջ, կից «Լուսաբաց» ճամբար եկած եւս 6 թեքեյանցի, մեկ պատասխանատու՝ Րաֆֆի Բակալի ուղեկցությամբ: **Րաֆֆին** ուսանում է Հալեպի համալսարանի տնտեսագիտական բաժնում եւ մեծ սեր ունի պատանեկան աշխատանքի:

«**Ազգի**» հարցին, թե ինչպես է անցնում ճամբարային հանգիստը, թեքեյանցիներ **Սաքոն**, **Արենը**, **Ժակլինը**, **Բարդին**, **Անին**, **Սոսին**, **Հրաչը**, **Ջորջը**, **Հովիկը**, **Արմանը**, **Գեւորգը**, **Կարինը**, **Պարույրը**, **Արան**, **Անդրանիկը**, որոնք շրջանաձեւ նստել էին խոտերի վրա, միաբերան ասացին. «Շատ լավ, հրաշալի է, միայն մի քիչ կարոտը նեղում է, սակայն դա էլ հաղթահարում ենք հեռախոսով խոսելով, մեր առօրյայի մասինի լուր տալով»: Ի դեպ, Սիրիայից Հայաստան ժամանած բոլոր երեխաներին Վիվասել ՄՏՍ-ի գլխ. տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը** նվիրել է բջջային քարտեր: Տղաներից երկուսը սկզբում դժվարությամբ են հարմարվել ճամբարի ճաշերին: Իհարկե պարզ է, որ մայրիկի ձեռքի պատրաստած համեղ ճաշերից հետո նոր կերակրատեսակները այնքան էլ չեն հավանել: Սակայն այդ հարցն էլ երկու օր անց լուծվել է եւ Երեւանի «Հալեպ» խանութից շատ համեմունքներ հասցվել է ճամբար ու ամեն բան իր տեղն է ընկել: Ահա նաեւ այսպիսի բաներ էլ են լինում: Երեխաները պատմում էին իրենց ճամբարային առօրյայի մասին, սպորտային խաղերի, մրցումների, երգի ու պարի ուսուցման ու արշավների մասին:

Բացի հանգստից, թեքեյանցիները այցելել են Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Գառնի, Գեղարդ, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, Սեւան, Գոշավանք, նաեւ՝ Երեւանի տեսարժան շատ վայրեր: Սոսին տեղեկացրեց, որ թեքեյանցիներից շատերը ճամբարային հանգստից հետո կմնան Երեւանում՝ ծնողների ու հարազատների մոտ, որոնք արդեն ժամանակավորապես տեղափոխվել են հայրենիք, իսկ մյուսները կվերադառնան Հալեպ:

**Տիգրան Փուշմանյանը** (14 տ.), սովորում է ՀԲԸ Միության Լազար Նաջարյան դպրոցում եւ «**Ազգի**» հետ զրույցում ասաց. «Ես առաջին անգամ եմ հայրենիքում եւ ինձ համար շատ մեծ ուրախություն էր, որ ծնողներս որոշեցին, որ ես գամ: Այս միջավայրը շատ տարբեր է Հալեպից: Այս չքնաղ բնությունը սիրեցի, լեռները, լիճը, ափսոս՝ Արարատը պարզ չտեսա: Ինչպես պատկերացնում էի Հայաստանը, այդպես էլ տեսա: Ուրախ եմ, որ շփվեցի ու ծանոթացա հալեպցի իմ տարեկիցների հետ, որոնց նախապես չէի ճանաչում»:

**Խաչիկ Չափառյանը** (14 տ.), այնքան էր տպավորված Հայաստանով, որ որոշել է անպայման վերադառնալ. «Հայրենիքես բաժանվելու հեռանկարը շատ տխուր զգացում է արթնացնում եւ ցավում եմ, որ շուտ թռան այս երազածս օրերը: Երբ վերադառնամ Հալեպ, ծնողներիս պիտի պարտադրեմ, որ Հայաստան գանք ապրելու»:

**Շաղիկ Բաղդասարյանը** (16 տ.), արդեն 3-րդ անգամն է, որ Հայաստան է գալիս ու սեպտեմբերի 1-ին Երեւանի թիվ 114 դպրոցն է հաճախելու: «Մի քիչ մտահոգ եմ, որ սկզբում դժվար է լինելու, նոր միջավայր եւ նոր դասեր, բայց քանի որ մայր հայրենիքում եմ, եւ հույս ունեմ, որ ամեն ինչ հեշտությամբ կհաղթահարեմ»:

Իսկ **Սաքոն** նշում էր. «Հայրենիքի ջուրը շատ անուշ է, օդը հրաշալի եւ երբ Հալեպ վերադառնամ, Հայաստանից ջուր ու հող պիտի տանեմ, որ քիչ կարոտեմ: Իսկ երբ դրանք վերջանան՝ կրկին կգամ, խոստանում եմ...»:

Այո, դժվար է հայրենիքից հեռու ապրող այս երեխաների համար, որոնք մշտական կարոտը սրտում երազում են վերադարձի մասին: Հուսանք, որ շատ շուտով թեքեյանցի երեխաների երազանքները կիրականանան լիովին ու նրանք կբռնեն տունդարձի ճամփան, նախ խաղաղած Սիրիա եւ այնուհետեւ՝ դեպի Հայաստան:

Ահա այսպիսի բարեմաղթանքներով հրաժեշտից առաջ թեքեյանցիները կրկին համախմբվեցին ու հիշատակի համար լուսանկարվեցին, որ միշտ հիշեն ճամբարային հանգստի երկու շաբաթները մայր հայրենիքում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
Հանքավան-Երեւան

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# Հանիրավի արված հայտարարություններ, ըստ Գալուստ Սահակյանի

*1-ին էջից*

«Իսկ դա հանիրավի արված հայտարարություն է, որը չի կարող մեր հետագա գործողությունների բնութագիրը դառնալ, փորձը ցույց է տալիս, որ մեծամասնության՝ Հանրապետականի որոշումներով են հարցեր լուծվում, ու ինչ որոշի մեծամասնությունը, դա է լինելու»:

Մի լրացուցիչ անգամ ճշտեցինք՝ Իսկ ԲՀԿ-ն իշխանություն չէ՞, քանի որ ԲՀԿ-ականները «ընդդիմադիր» տերմինը ոչ մի անգամ չօգտագործեցին. «Ոչ, ԲՀԿ-ն ընդդիմադիր դաշտում է: Իշխանությունը գործադիր մարմին է ձեւավորում, իսկ քաղաքական ուժերը իշխանական են, երբ մասնակից են իշխանության կազմավորմանը», հայտնի դրույթը բարձրաձայնեց ՀՀԿ փոխնախագահը:

Նույն՝ ԲՀԿ նախաձեռնությամբ Ծաղկաձորում Եվրասիական միության թեմայով համաժողով կազմակերպվեց, երբ Հայաստանի քաղաքական օրակարգում այդպիսի հարց չկա. «Կարծում եմ՝ ավելորդ թնջուկ է քաղաքական դաշտում հայաստանյան իրականության մեջ, որովհետեւ Եվրասիական միությունը դեռ չի ձեւավորել կազմակերպչական փաստաթղթերի փաթեթ, դա դեռ գաղափար է՝ երեք պետությունների շրջանակում: Նույնիսկ եթե Հայաստանը որեւիցե մոտեցում ցուցաբերելու լինի՝ կաշխատի ամենաշահավետ իրավիճակներից ելնելով դրան գնալ: Մեզ մոտ դա չի քննարկվում, որովհետեւ ըստ էության նույնիսկ քննարկման նյութ էլ չունենք, որ քննարկենք: Մոդելային խոսակցություններ են, կարծում եմ տարիներ են պետք՝ մոդել մշակելու համար: Ես ե՛ւ որպես քաղաքական ուժի ներկայացուցիչ, ե՛ւ որպես անձ ասում եմ՝ այն բոլոր գաղափարները, որոնք են կվնասեն Հայաստանի ինքնիշխանությանը՝ Հանրապետականի կողմից անընդունելի կլինեն»:

Գյումրիի նախընտրական իրավիճակի հետ կապված ՀՀԿ փոխնախագահը հնարավոր համարո՞ւմ է ֆորսմաժորային իրավիճակ, խժդժություններ, քանի որ նաեւ խոսակցություններ կան, որ Վարդան Ղուկասյանի կողմնակիցները պատրաստվում են ընտրվել ավագանու անդամներ, եւ այդ դեպքում էլ լարվածությունը հետագայում գուցե չթուլանա. «Որպես խորհրդարանական ընտրությունների շարունակություն ՏԻՄ ընտրություններն էլ դրական պետք է անցկացվեն, եւ ամեն ինչ արվում է ոչ միայն Գյումրիում, այլեւ ընդհանրապես, որպեսզի բախումներ չտանեն», նշեց Գ. Սահակյանը՝ հավելելով, թե ՀՀԿ աջակցությունը Սամվել Բալասանյանին քաղաքական քայլ չէ, ընդամենը նորից ՀՀԿ-ի սկզբունքն այն է, որ տարածքներում ընտրվեն նրանք, ովքեր մատչելի են հասարակության համար, իրենց հեղինակությամբ հասարակության մեջ դրական էմոցիաներ են առաջացնում: Հիմա Բալասանյանը հեղինակություն ու դրական ընկալում ունի՞ Գյումրիում, հետաքրքրվեցինք. «Այո, մեր վերլուծականն այդպես է, դրա համար էլ պաշտպանում ենք:»

ՀՀԿ մասնակցությունը ՏԻՄ ընտրություններում գնահատելով՝ ՀՀԿ խմբակցության ղեկավարը նշեց, թե 4 հազարից ավելի ավագանու անդամի թեկնածուներ ունի ՀՀԿ-ն բոլոր 642 այն համայնքներում, որտեղ ընտրություններ են տեղի ունենալու: Ավագանի անդամների առաջադրման առումով էլ փորձել են այնպես անել, որ 30 տոկոսից ավելին կանայք լինեն.«Սա էլ կշռադատված մոտեցում է, որովհետեւ ուսումնասիրել ենք ավագանու գործունեությունը եւ գտնում ենք, որ տարածքներում կանանց մուտքը որպես ավագանու անդամ կռահելի կդարձնի հասարակության համար հենց ավագանու գործունեությունը: Այդ իմաստով էլ բարձր տոկոսի ակնկալիք կա»: ՀՀԿ փոխնախագահը քննադատեց ընդդիմությանը՝ ՏԻՄ ընտրություններին չմասնակցելու համար. «Փաստորեն մեր քաղաքական ուժերն իրենց քաղաքական կարիերան միայն վաստնում են Երեւանում եւ չեն մասնակցում ավագանու ընտրություններին տեղերում: Ասում են՝ ձեւական է, մեկ է իշխանության թեկնածուներն են անցնում. այդ դեպքում ինչո՞ւ են խորհրդարանական ընտրություններին մասնակցում: Որովհետեւ բոլորն ուզում են բուրգի վերեւում գտնվել, ժողովրդի հարցերով չզբաղվել: Որովհետեւ չեն կարողանում համախմբվել եւ ցույց տալ, որ ընդդիմությունն, իրոք, կարող է գյուղը կամ տարածքը բարձրացնել»:

Անդրադառնալով թեժ աշնան սպասման խոսակցություններին՝ մեր զրուցակիցը նշեց. «Իհարկե բարձր ակտիվություն կլինի, որովհետեւ երկիրը նախագահական ընտրությունների է գնում: Նախագահի թեկնածուներ էլ բնականաբար կլինեն»: Իսկ թե ԲՀԿ-ն կպաշտպանի՞ Սերժ Սարգսյանին, թե՞ առանձին թեկնածուով հանդես կգա, ըստ Գ. Սահակյանի, ԲՀԿ-ն մինչեւ այժմ որեւէ քննարկում կամ վերլուծական չի ներկայացրել հասարակությանը, որ կարողանան գնահատականներ տալ. «Նախագահի թեկնածուների դեպքում կուսակցություններից շատերը թեկնածու են առաջադրելու հասարակության հետ այդ ակտիվ շրջանում ավելի շատ փոխհարաբերվելու, իրենց իմիջն ապագայի համար բարելավելու համար: Որքան այլընտրանքային թեկնածուներ շատ լինեն, այնքան ժողովրդի մեջ ակտիվությունը կբարձրանա, ընտրելու կամ կողմնորոշվելու խնդիրն ավելի հստակ կլինի», հանգիս էր Գ. Սահակյանը:

Ռուբեն Հայրապետյանի մանդատի խնդրին եւս անդրադարձ եղավ. «Ինչքան էլ փորձ արվի դա քաղաքականացնել՝ դա անձի խնդիր է, իսկ մանդատի վայր դնելու նրա հայտարարության առթիվ ասել եմ, որ նա մի փոքր շտապել է: Համենայն դեպս՝ իր հայտարարությանը հակառակ որեւէ միտք նա առ այսօր նա չի արտահայտել ո՛չ հասարակության մեջ, ո՛չ էլ կուսակցությունում»:

# Հերքում-հաստատում-հերքում

ԲՀԿ մամլո խոսնակ **Տիգրան Ուրիխանյանը** երեկ հերքումներ է արել. նախ, ԲՀԿ-ն նախագահ Սերժ Սարգսյանի հետ չի պայմանավորվել սատարելու նրա թեկնածությունը՝ վարչապետ Տիգրան Սարգսյանին պաշտոնանկելու դիմաց, ինչպես որ մամուլն է գրում, եւ ԲՀԿ գերագույն պայմանավորվածությունը հանրության հետ է: Բացի դրանից՝ ինքը ոչ թե հայտարարել է վարչապետի պաշտոնանկության մասին, այլ ընդամենը պատասխանել է լրագրողի հարցի՝ վերահաստատելով հին դիրքորոշումը, թե կողմ են նրա «պաշտոնանկությանը ցանկացած ձեւաչափում»:

Ս. Խ.

## 80-ամյակ

# Մարդու կյանքն ու գործերը, նրա հիշատակը

*Հենրիկ Լիլոյանի ծննդյան 80-ամյակի առիթով*

Օգոստոսի 27-ին լրացավ լրագրող, դիվանագետ, պատմաբան, կուսակցական եւ պետական գործիչ Հենրիկ Ցոլակի Լիլոյանի (1932-1999) ծննդյան 80 տարին: Անվիճելիորեն վառ, ինքնօրինակ, տաղանդավոր այդ անձնավորությունը պատկանում է «վաթսունականների» սերնդին, նրա անունը լայնորեն հայտնի էր հանրապետությունում եւ դրա սահմաններից դուրս:

Հենրիկ Լիլոյանի հետ իմ ծանոթությունը կայացավ 1950-ական թթ., երբ ես գլխավորում էի Հայաստանի կոմերիտմիությունը, իսկ նա սովորում էր Երեւանի պետհամալսարանում: Բայց դեռ ծանոթանալուց առաջ ես լավ ճանաչել էի նրա հորը, երբ Ռազմաքաղաքական ակադեմիան ավարտելով՝ նշանակվեցի 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի քաղբաժնի պետի կոմերիտական աշխատանքների գծով տեղակալ: Հայրենական Մեծ պատերազմի մասնակից, փոխգնդապետ Ցոլակ Լիլոյանը գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ մեր փառապանծ հայկական զորամիավորման ամբողջ մարտական ուղին անցել է Կովկասի նախալեռներից մինչեւ Բեռլին: Կաղզվանի (Կարսից ոչ հեռու) ծնունդ այդ ազնիվ եւ սկզբունքային մարդը, իսկական ռազմիկն արժանի հարգանք ու հեղինակություն էր վայելում զինվորների, սպաների եւ դիվիզիայի ղեկավարության շրջանում: Եվ զարմանալի չէ, որ որդին հորից ժառանգել էր բազմաթիվ դրական հատկանիշներ:

Հենրիկ Լիլոյանը իր հասակակիցների մեջ աչքի էր ընկնում գիտելիքներով, մտահորիզոնով, խորագիտակությամբ, լիդերի ակտիվ դիրքորոշմամբ, կազմակերպչական ունակություններով: Համալսարանն ավարտելուց հետո նա աշխատել է «Կոմունիստ» հանրապետական պաշտոնաթերթի խմբագրությունում որպես Սեւանի ավազանի շրջանների թղթակից, հետո՝ Հայաստանում «Մեդիցինսկի ռաբոտնիկ» («Բուժաշխատող») մոսկովյան թերթի սեփական թղթակից, ավելի ուշ վերադարձավ «Կոմունիստ» թերթի խմբագրություն:

Այդ տարիներին ես աշխատում էի Մոսկվայում եւ Երեւան տեղափոխվեցի 1961-ին, երբ ընտրվեցի Հայկոմկուսի Կենտկոմի քարտուղար: Ասեմ նաեւ, որ «Կոմունիստի» այն տարիների խմբագրակազմն առանձնանում էր տաղանդավոր հեղինակների համաստեղությամբ, որոնք հետագա տարիներին անցան կուսակցական աշխատանքի, պատասխանատու պաշտոններ վարեցին կուսակցական եւ պետական մարմիններում:

Ուստի պատահական չէ, որ 1963-ին Լիլոյանն աշխատանքի հրավիրվեց (ինչպես ասում էին այն ժամանակ՝ առաջ քաշվեց) ՀԿԿ Կենտկոմում, նախ՝ որպես տեղեկատվության գծով հրահանգիչ, իսկ մեկ տարի անց նշանակվեց Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարոբյանի օգնական: Դա խրուշչովյան «ձնհալի» թեժ շրջանն էր, երկրում մեծ վերափոխումների ժամանակը, եւ մենք հաճույքով կուսակցական աշխատանքի էինք ընդունում թարմ կադրերի՝ լավ կրթություն ստացած խելացի երիտասարդների: Անկասկած, նման կադր էր Լիլոյանը:

1965 թ. Հենրիկին գործուղեցին ԽՄԿԿ Կենտկոմին կից հասարակական գիտությունների ակադեմիայի (ՀԳԱ) ասպիրանտուրա, որտեղ նա հետաքրքրական թեզ գրեց 1904-14 թթ. հայ բոլշեւիկյան հրապարակախոսության մեջ ազգային հարցի լուսաբանման պատմության վերաբերյալ: Հատկանշական է, որ Լիլոյանը միանգամից ընդգրկվեց գաղափարախոսական կադրերի այդ հեղինակավոր դարբնոցի երկրորդ կուրսում. դրա համար ընդունվեց ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարության հատուկ որոշում անձամբ գլխավոր քարտուղար Լեոնիդ Բրեժնեւի ստորագրությամբ. «Ընկեր Հ. Ց. Լիլոյանին, բացառության կարգով, ընդունել ԽՄԿԿ Կենտկոմին կից ՀԳԱ երկրորդ կուրս՝ ատենախոսության վրա աշխատանքն ավարտելու համար»: Նման բան խիստ հազվադեպ էր պատահում:

Թեզը պաշտպանելով՝ Հենրիկը վերադարձավ Երեւան, եւ մենք (այդ ժամանակ ես արդեն Կենտկոմի երկրորդ քարտուղար էի) նրան անմիջապես ՀԿԿ Կենտկոմում ընդունեցինք որպես արտասահման կապերի սեկտորի վարիչ: Ճիշտ է, այդ պաշտոնում նա աշխատեց ընդամենը 3 ամիս: Երբ 1967-ի սեպտեմբերին Կենտկոմում սեկտորը վերափոխվեց ինֆորմացիայի եւ արտասահմանյան կապերի բաժնի, Լիլոյանը նշանակվեց հանրապետության ողջ արտաքին քաղաքական գործունեությունը համակարգող այդ ստորաբաժանման վարիչի տեղակալ:

Դա Հայաստանի արտասահմանյան կապերի, միջազգային շփումների ակտիվ զարգացման ժամանակաշրջան էր, ըստ որում, մեզ այցելում էին ոչ միայն սոցիալիստական երկրների եւ եղբայրական կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ղեկավարներ, այլեւ զանազան պետությունների ներկայացուցիչներ: Այդ ամենը ենթադրում էր մեծ պատասխանատվություն եւ պահանջում էր լարված աշխատանք, մասնավորապես՝ այնպիսի ծրագրերի մշակման նպատակով, որոնք հնարավորություն էին տալիս հյուրերին ցուցադրել ինչպես հայ ժողովրդի պատմա-



կան հարուստ անցյալը, այնպես էլ նոր՝ Խորհրդային Հայաստանի ձեռքբերումներն ամենատարբեր ոլորտներում, ընդսմին պահպանելով արարողակարգի նորմերը, որոնցից հանրապետությունում այն ժամանակ քչերն էին գլուխ հանում:

Այսօր ես գոհունակությամբ եմ վերհիշում, որ բաժնի բազմամյա վարիչ Լեւոն Մանասերյանն ու նրա տեղակալ Հենրիկ Լիլոյանն աշխատում էին ներդաշնակ, համերաշխ եւ բավական արդյունավետ: Այդ տարիներին մենք Հենրիկի հետ շփվում էինք ամեն օր, եւ մեր հարաբերությունները վերաճեցին ընկերականի եւ, նույնիսկ, բարեկամականի, իսկ ժամանակի ընթացքում էլ ավելի ամրապնդվեցին:

Հայաստանի ղեկավարությունում մենք Անտոն Քոչինյանի, Նագուշ Հարությունյանի եւ Բադալ Մուրադյանի հետ բարձր էինք գնահատում Լիլոյանին իբրեւ բարեխիղճ, քաղաքականապես գրագետ աշխատակցի, բարի ու մարդամոտ անձնավորության, որն աշխատանքի իր հատվածում միշտ ստանձնում էր հիմնական բեռն ու պատասխանատվությունը: Որպես կանոն, օտարերկրյա պատվիրակությունների բոլոր ղեկավարները իրենց պարտքն էին համարում մեկնելուց առաջ Լիլոյանին շնորհակալություն հայտնել Հայաստանում իրենց այցը լավ կազմակերպելու համար: Հենրիկի աշխատանքն, իրոք, շատ էր, մանավանդ՝ ամռանը եւ աշնանը, երբ Հայաստանում լինում էր միաժամանակ երեքչորս պատվիրակություն, եւ դա չէր կարող չանդրադառնալ մեր աշխատակիցների վրա: Կենտկոմի բյուրոյի նիստերից մեկի ժամանակ Հենրիկը (չտեսնված դեպք) նույնիսկ քնեց, եւ ես ստիպված էի բաժնի վարիչին գրել այսպիսի անսովոր երկտող. «Ձեր տեղակալին ուղարկեք տուն, թող քունն առնի» (ես կմոռանայի այդ դեպքը, եթե դրա մասին ինձ չհիշեցնեին Լիլոյանի որդին եւ դուստրը՝ Տիգրանը եւ Նինան, հանձնելով իմ այդ «ուղերձի» պատճենը):

Հենրիկ Լիլոյանի կենսագրության հաջորդ փուլը դարձավ դիվանագիտական աշխատանքը Ֆրանսիայում: Այսօր շատերին թվում է, թե հայկական դիվանագիտությունը ծագել է դատարկ տեղում, քչերն են հիշում, որ 1960-82 թթ. Փարիզում ԽՍՀՄ դեսպանությունում մշտապես աշխատել է հանրապետության ներկայացուցիչը, որին իրավամբ անվանում էին Հայաստանի դեսպան: Ֆրանսիայի մայրաքաղաքում Հայաստանի ներկայացուցիչների շարքում էին Լեւոն Մանասերյանը, Մարատ Խառազյանը, Հենրիկ Լիլոյանը, Ռուբեն Սահակյանը: Խորհրդային դեսպանությունում հիմնական պարտականությունների կատարմանը զուգընթաց, նրանք, փաստորեն, կամրջում էին հանրապետությունը ֆրանսահայ համայնքին, ապահովում մշտական կապը մեր հայրենակիցների, հասարակական եւ կրոնական կազմակերպությունների հետ:

Փարիզի համար Լիլոյանի թեկնածությունը ԽՄԿԿ Կենտկոմում եւ ԽՍՀՄ ԱԳՆ-ում շատ դրական ընդունվեց, քանի որ այդ ժամանակ նա ուներ կուսակցական աշխատանքի հարուստ փորձ, առավել եւս՝ կապված միջազգային գործերի հետ: Իսկ նախքան արտերկիր մեկնելը՝ 1970 թ. առաջին կիսամյակում Հենրիկը գործուղվեց Մոսկվա՝ ԽՍՀՄ ԱԳՆ բարձրագույն դիվանագիտական դպրոցի ղեկավար դիվանագիտական աշխատողների կատարելագործման դասընթացների:

Ֆրանսիայում արգասավոր աշխատանքի ամբողջական 5 տարիների ընթացքում Հենրիկ Լիլոյանը նախաձեռնեց հայկական խաչքարի հանձնումը Լուվրի աշխարհահռչակ թանգարանի հավաքածուին, կազմակերպեց հայ մշակույթի բազմաթիվ հայտնի գործիչների երկերի եւ արխիվների «վերաբնակեցումը» Հայաստան, ինչպես նաեւ ֆրանսիական մեդալների եզակի հավաքածուի հանձնումը Պատմության պետական թանգարանին, մի շարք հին ձեռագրերինը՝ Մատենադարան: Նա օժանդակեց Ֆրանսիայում Հայաստանի զբոսաշրջության օրերի (1973 թ.) եւ հայկական կինոյի փառատոնի (1975 թ.) կազմակերպմանը, բազմաթիվ կատարողների եւ ստեղծագործական կոլեկտիվների հյուրախաղերի, հայ գեղանկարիչների ցուցահանդեսների անցկացմանը: Փարիզում նա էր «հոգ տարել» Արամ Խաչատրյանի, մարշալ Բաղրամյանի ու Վիլյամ Սարոյանի, Կոնստանտին Սիմոնովի, Սերգեյ Միխալկովի ու Ռոբերտ Ռոժդեստվենսկու, Առնո Բաբաջանյանի եւ Մարիետա Շահինյանի այցերի ընթացքում, շփվել է Մարկ Շագալի, Մորիս Դրյուոնի ու Լուի Արագոնի հետ, բարեկամություն արել Գառզուի ու Ժանսեմի, Գրիգոր Շլտյանի, Անրի Վեռնոյի ու Շառլ Ազնավուրի հոր՝ Միշա Ազնավուրյանի հետ:

Լիլոյանը նպաստել է Վազգեն Ա Ամենայն հայոց երջանկահիշատակ կաթողիկոսի Փարիզ կատարած մի շարք այցերի հաջող կազմակերպմանը. Վեհափառը շատ ջերմ էր վերաբերվում Հենրիկին ու բարձր գնահատում նրան:

Հենրիկ Լիլոյանի առաջարկով ՀՀԳ-Արմենպրեսի Հայաստանի նորությունների հայերեն հեռատիպային ժապավենը սկսեց ՏԱՍՍ-ի միջոցով առաքվել նաեւ Փարիզ (մինչ այդ այն ուղարկվում էր Բեյրութ ու Նյու Յորք)՝ այնտեղ տպագրվող հայկական թերթերի, այդ թվում, ոչ միայն խորհրդամետ ուղղություն ունեցող հրատարակությունների համար:

Այն տարիներին, երբ ինձ ուղարկեցին Սենեգալում ու Գամբիայում ԽՍՀՄ դեսպան, Լիլոյանի հետ շփումներս չդադարեցին: Դակար գնալիս կամ Մոսկվա վերադառնալիս, լինում էի Փարիզում, ուր Հենրիկը մեզ ընդունում էր իրեն բնորոշ ջերմությամբ, սրտաբացությամբ ու հյուրընկալությամբ: Եվ մենք միասին հաճույքով վերհիշում էինք մեր համատեղ աշխատանքը, անցած ժամանակները, մեր ընկեր-բարեկամներին: Իրենց հերթին, Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպաններ՝ ականավոր խորհրդային դիվանագետներ Վալերիան Զորինը, Պյոտր Աբրասիմովը եւ Ստեփան Չերվոնենկոն միշտ ջերմ էին խոսում Լիլոյանի մասին, նրա գիտելիքների, ձիրք ու շնորհի, դիվանագիտական կոլեկտիվում աշխատելու հմտության, ընդհանուր առմամբ արգասաբեր գործունեության մասին:

Հենրիկին գնահատում էին նաեւ Մոսկվայում՝ դրանում համոզվում էի՝ գալով արձակուրդ կամ գործուղման: Այսպես, աշխատելով դեսպանության մշակույթի բաժնում, Լիլոյանը ֆրանսիական կողմի հետ ամենաակտիվ բանակցողներից էր Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզա (Ջոկոնդա)» գլուխգործոցի Մոսկվայում ցուցադրելու հարցի շուրջը: Դրա մասին ինձ պատմել է ԽՍՀՄ մշակույթի այն ժամանակվա նախարար Եկատերինա Ֆուրցեւան եւ նրա տեղակալ Վլադիմիր Պոպովը:

Վերադառնալով արտերկրից, Հ. Լիլոյանը կրկին աշխատանքի անցավ ՀԿԿ Կենտկոմի ինֆորմացիայի եւ արտասահմանյան կապերի բաժնում: Հայաստանի ազգային արխիվում երբեմնի գաղտնի փաստաթղթերի թվում հետաքրքրական է կարդալ նրա նախապատրաստած ու զեկուցած որոշումները, օրինակ՝ լիբանանահայ համայնքին օգնություն ցույց տալու, կամ էլ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին Աստվածաշունչը վերահրատարակելու թույլտվություն տալու մասին...

1982-89 թթ. Հենրիկը գլխավորել է Հայկական ԽՍՀ արտասահմանյան տուրիզմի գլխավոր վարչությունը, եղել հանրապետության կառավարության անդամ: Դրանք տուրիզմի ոլորտի սրընթաց զարգացման տարիներն էին, երբ զբոսաշրջությունը դարձավ հայաստանյան էկոնոմիկայի կարեւոր ճյուղ: Հայաստան էին գալիս ոչ միայն մեր սփյուռքահայ հայրենակիցները, այլեւ հազարավոր զբոսաշրջիկներ ամենատարբեր երկրներից: Այդ շրջանում շահագործման հանձնվեց «Արմենիա» հյուրանոցի 2-րդ մասնաշենքը, կառուցվեց «Ինտուրիստի» կոնֆերենս-դահլիճը (այժմ՝ Երաժշտական կոմեդիայի թատրոնը):

Երբ 1989 թ. ողջ ԽՍՀՄ-ում լուծարեցին արտասահմանյան տուրիզմի հանրապետական գերատեսչությունները, Լիլոյանին տեղափոխեցին Հայաստանի պետական հանրային գրադարան՝ տնօրենի պաշտոնով: Նրա նախաձեռնությամբ գրադարանը անվանափոխվեց Ազգայինի, լույս տեսան 1988 թ. ավերիչ երկրաշարժի ու Հայաստանի դաժան շրջափակման մասին փաստաթղթերի ու նյութերի բազմահատոր ժողովածուները: Ցավոք, ավելին Հենրիկին անել չհաջողվեց, քանի որ նրան «նեղեցին», ազատեցին աշխատանքից:

Հետագայում նա դարձավ արդեն նորանկախ Հայաստանի ԱԳՆ պատմադիվանագիտական բաժնի առաջին վարիչը, ԱԳՆ «Դիվանագիտական բանբերի» գլխավոր խմբագիրը, դասավանդեց դիվանագիտության պատմություն ու միջազգային հարաբերություններ առարկան Երեւանի «Հրաչյա Աճառյան» համալսարանում: ՀՀ ԱԳՆ-ում պաշտոնավարելիս եւս Լիլոյանի «բախտը չբերեց»՝ եկան նոր ժամանակներ, եւ նա մնաց առանց աշխատանքի...

Պատմագիտության թեկնածու Հենրիկ Լիլոյանը շարունակում էր զբաղվել լրագրությամբ ու հրապարակախոսությամբ, մասնավորապես «Ազգ» օրաթերթում: Նրա գրչին են պատկանում բազմաթիվ գրքեր, հարյուրավոր հոդվածներ, նոթագրություններ՝ տարբեր մայրցամաքներ կատարած ուղեւորություններից ու հանդիպումներից, խորհրդային խոշոր դիվանագետ Լեւ Կարախանի (Լեւոն Կարախանյան) կյանքի ու գործունեության մասին հետազոտությունը, «Վերածնված Հայաստանի մշակույթը» գիրքը, որն ուկրաիներեն լույս է տեսել Կիեւում: Լիլոյանը հայերեն առաջին Դիվանագիտական բառարանի հեղինակն է, որը ծանր հիվանդության պատճառով չհասցրեց ավարտին հասցնելու ու հրատարակել:

Չէր ընկճվում, մեր վերջին հանդիպման ժամանակ պատմում էր խորհրդային հայազգի դեսպանների մասին գիրք գրելու մտադրության շուրջ...

Հենրիկ Լիլոյանի մասին խոսելիս, չեմ կարող չհիշել ու արժանին չմատուցել նրա հմայիչ տիկնոջը՝ Սեդային, որը, ցավոք, եւս շատ վաղ հեռացավ կյանքից:

... 2003 թվականին Երեւանում, Մաշտոցի պողոտայի այն շենքի ճակատին, ուր ապրել են Լիլոյանները, հանդիսավորությամբ բացվեց Հենրիկի հուշատախտակը: Ինձ շատ հաճելի է, որ արդեն երկար տարիներ Ռուսաստանի դիվանագետի օրը հուշատախտակի մոտ ծաղիկներով գալիս են ՌԴ դեսպանն ու դեսպանության աշխատակիցները:

Ուրախալի է, որ հետայսու Դիվանագետի օր է սահմանվել նաեւ Հայաստանում եւ, վստահ եմ, այդ օրը, ՀՀ ԱԳՆ աշխատակիցները հիշատակի տուրք կմատուցեն նաեւ Հենրիկ Լիլոյանին՝ լրագրողին, դիվանագետին, պատմաբանին, կուսակցական եւ պետական գործչին:

**ԳԵՈՐԳԻ ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆՑ**
**Ռուսաստանի հայերի միության առաջին փոխնախագահ,**
**ԽՍՀՄ արտակարգ եւ լիազոր դեսպան**

# Ռազմի դաշտի է վերածվել Ջիզրեն

## *Բախումներ նահանգի քուրդ բնակչության եւ ոստիկանության միջեւ*

Վերջին շրջանում աննախադեպ ակտիվացել է PKK-ի գործունեությունը Թուրքիայի արեւելյան եւ հարավարեւելյան քրդաբնակ շրջաններում: Չնայած 100-հազարանոց բանակի ներկայությանը, PKK-ն այս շրջանները հարձակումներ է գործում պահպանական զորամասերի, զորանոցների, կայազորների, ոստիկանատների եւ գավառապետարանների վրա: Ընդ որում, գավառը գրավելու, իսկ գավառապետին՝ առեւանգելու նկատառումով, ինչպես օգոստոսի 23-ի լույս 24-ի գիշերը տեղի էր ունեցել Շըրնաք նահանգում:

Սա օգոստոսին Շըրնաքի վրա PKK-ականների երկրորդ հարձակումն էր: Առաջինի պարագայում նրանք գրավել եւ իրենց դրոշն էին բարձրացրել գավառապետարանի տանիքին: Այս ամենը ցույց է տալիս, որ Թուրքիայի քրդաբնակ շրջաններում թուրքական զինված եւ անվտանգության ուժերը նախաձեռնությունը զիջելով PKK-ին, անցել են պաշտպանության: Քանի որ անընդմեջ զոհեր են տալիս, կնշանակի՝ չեն էլ կարողանում պաշտպանվել:

Համենայն դեպս, ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավոր Ումիթ Օրանը, նկատի ունենալով օգոստոսի 20-24-ը, թուրքական հանրային հեռուստատեսության էկրանից հայտարարեց. «Չորս օրում 30 նահատակ ենք տվել»: Մինչդեռ պաշտոնական տվյալներով «նահատակված» զինծառայողների թիվը 6 էր:

Կրճատելով սպանված զինծառայողների թիվը, թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբն ու պաշտպանության նախարարությունը ակամա խոստովանում են կռիվներում PKK-ի առջեւ բանակի ընկրկումն, իսկ նահատակների հուղարկավորության ժամանակ թուրքական հեռուստատեսության էկրանից ցուցադրվող լացուկոծը, անեծքը, երկրի ղեկավարների թուրք ազգին հասցեագրած ցավակցությունները ու հավաստիացումները, թե նահատակվածների արյունը գետնին չի մնա, ճնշող տպավորություն էին գործում թուրքերի վրա եւ հուսահատության մատնում: Այդ ընթացքում խորհրդարանական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության առաջնորդները հայտարարում են. «Թուրքիայում ծավալվող քրդական շարժման վերջնական նպատակը քաղաքական անկախությունն է»:

Ընկրկելու պարագայում խոսքը սոսկ թուրքական զինված ուժերին չի վերաբերում, այլ նաեւ ոստիկանությանը: Դրա վառ օրինակը Շըրնաք նահանգի Իրաքին սահմանակից Ջիզրե գավառում «Դունյա Բյուլթենի» վկայությամբ, գյուղաքաղաքը պատերազմի թատերաբեմ դարձած հանրահավաքն է: Ըստ կայք-էջի, «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության «անկախության երթը ողջունելու» հանրահավաքը ո՛չ Շըրնաքի նահանգապետարանը, ո՛չ էլ Ջիզրեի գավառապետարանը չեն արտոնել: Հակառակ դրան, հինգ հազար մարդ հավաքվել է ցույցի, իրականացնելով նախապես անվտանգության անհրաժեշտ միջոցառումներ, ոստիկանությունը զրահամեքենաների աջակցությամբ փորձել է ցրել հանրահավաքի մասնակիցներին: Երբ վերջիններս մնացել են անդրդվելի, ոստիկանության ուժերը զրահամեքենաներով հարձակվել են ամբոխի վրա եւ օգտագործել արտասվաբեր գազ: Ամբոխը քարերով դիմադրել է, ապա հայտնվել են դիմակավորներ, որոնք մոլոտովյան կոկտեյլներով կասեցրել են զրահամեքենաների առաջխաղացումը եւ ձայնային ռումբեր նետել ոստիկանության վրա: Այս համառ դիմադրությունից հետո ոստիկանության ուժերը նահանջել են, եւ բեմահարթակ է բարձրացել «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության Բիթլիսի պատգամավոր Զենդերիօղլուն, քրդերեն եւ թուրքերեն ելույթով դիմել է հանրահավաքի մասնակիցներին:

Ելույթի պահին ոստիկանության ուժերը նոր հարձակում են նախաձեռնել եւ բախվել են արժանի դիմադրության, որը տեւել է ավելի քան 3 ժամ: Այսպիսով, Ջիզրեի փողոցները վերածվել են ռազմի դաշտի: Թուրքական պետությունը հետզհետե հայտնվում է անելանելի վիճակում: Քրդական հարցը լուծելու փոխարեն քրդերի շարժումը զենքի ուժով ճնշելու նրա ձեռնարկումները լուրջ հակահարված են ստանում:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԹԵՀՐԱՆ

# Իրանը Չմիանալու շարժմանը կոչ արեց բոյկոտել պատժամիջոցները



Իրանի ղեկավարությունը Թեհրանում գագաթաժողովին հավաքված Չմիացած երկրների շարժման մասնակից երկրներին կոչ է արել չկատարել ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների հակաիրանական պատժամիջոցները: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Արեւմուտքի ձեռնարկած պատժամիջոցներն այս տարի սկսել են առավել լրջորեն ազդել Իրանի տնտեսության վրա, մանավանդ՝ իրանական նավթից հրաժարվելու եւ Իրանին վճարումների SWIFT միջազգային համակարգից անջատելու Եվրոմիության որոշումից հետո:

Թեհրանի գագաթաժողովն անցկացվում է այն կապակցությամբ, որ Իրանը դառնում է Չմիանալու շարժման նոր նախագահը:

Շարժումը 1961-ին ստեղծվել էր Գամալ Աբդել Նասերի, Ջավահառլալ Ներուի եւ Իոսիպ Բրոզ Տիտոյի նախաձեռնությամբ:

Գագաթաժողովին մասնակցում են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը, ԿԺԴՀ առաջնորդ Կիմ Չոն Ինը, Եգիպտոսի նախագահ Մոհամմեդ Մուրսին, որի երկիրը Իրանի հետ դիվանագիտական հարաբերություններ չունի:

Պ. Ք.

# Քրիստոնեական Ռաբլե ավանը պաշարման մեջ

## *Սիրիական ընդդիմությունը երկու շաբաթ սովի է մատնել բնակիչներին*

Սիրիական այսպես կոչված ընդդիմության էթնիկ կազմը խայտաբղետ է: Դրա կազմում բացի սիրիացիներից կան նաեւ չեչեն գրոհայիններ, աֆղան խմբավորումներ, «Ալ Ղաիդայի» ահաբեկիչներ եւ թուրք կամավորներ: Բոլորն էլ վարձու մարդասպաններ են, որոնց վարձատրում են ԱՄՆ-ի տարածաշրջանային խամաճիկներից Սաուդյան Արաբիան եւ Քաթարը, իսկ Թուրքիան՝ մարզում, ընդ որում՝ տարբեր ճամբարներում:

Այդ ճամբարներից մեկն էլ Հաթայում է եւ փակ, նույնիսկ Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավորների առջեւ: Խոսքը վերաբերում է Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավորներին, որոնց ղեկավար Քըլըչդարօղլուն, նշելով այս տխուր փաստը, հետեւյալ խոսքերով դիմեց Էրդողանի կառավարությանը. «Գործակալները վխտում են երկրում: Դուք, մեծարգո վարչապետ, ո՞ր ուժերին եք մարզում Հաթայի ճամբարում»: Էրդողանը դեռ չի պատասխանել: Սակայն հայտնի է, որ նախագահ Ասադի վարչակարգի դեմ Թուրքիան կազմակերպում է Սիրիայի թուրքմենների եւ ահաբեկչական գործողությունների համար կամավորներ է գործուղում Սիրիա, իսկ ճամբարներում մարզում է սուննի իսլամականներին:

Վերջերս իսլամական հրոսակախմբերը պաշարել են Հոմսի մոտակայքում գտնվող եւ քրիստոնյաներով բնակեցված Ռաբլե ավանը, որն ունի 12 հազար բնակիչ: Ավանի պաշարումը տեւել է երկու շաբաթ: Սպառվել են պարենի բոլոր պաշարները: Որպեսզի սովամահ անեն բնակիչներին, հրոսակախմբերը ոչնչացրել են ավանն արտաքին աշխարհի հետ կապող կամուրջները, եւ անանցանելի են դարձրել ճանապարհները: Ավանի բնակիչներից նրանք, ովքեր փորձել են ուտելիք հայթայթելու նկատառումով մեկնել շրջակա գյուղեր, դարձել են դիպուկահարների թիրախը: Նույն ճակատագրին են արժանացել մոտոցիկլետով Ռաբլե հաց բերողները:

Այս ամենի մասին ահազանգել է կենտրոնակայանը, Բեյրութում գտնվող Կաթոլիկ եկեղեցու օգնության միությունը, որի ահազանգին էլ օգոստոսի 26-ին արձագանքել է ձախակողմյան «Haber.sol.org» թուրքական կայքէջը: Ինչ վերաբերում է աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցներին, ապա սրանք չէին կարող մի կողմից փառաբանել սիրիական ընդդիմության ժողովրդավարական ջանքերը, իսկ մյուս՝ անդրադառնալ քրիստոնյաներով հագեցած ավանը սովամահ անելու ընդդիմադիր հրոսակների չարանենգ արարքին, որպեսզի «ժողովրդավարությունը» չտուժի, այս արարքն աշխարհը չընկալի իբրեւ առաքելության դրսեւորում: Համենայնդեպս, ուրբաթ օրը կառավարական զորքերը օգնության են հասել ավանի քրիստոնյա բնակչությանն ու շպրտելով ընդդիմադիր հրոսակախմբին, Ռաբլեն ազատել են պաշարումից:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

ՏԱՐԵՐՔ

# Արտակարգ դրություն ԱՄՆ-ի հարավում

## *Հանրապետականների համագումարը հետաձգվեց ծովամրրիկի պատճառով*

ԱՄՆ-ի հարավ-արեւելքը հայտնվել է «Իսահակ» արեւադարձային ծովամրրիկի ազդեցության ոլորտում: Ֆլորիդայի նահանգում չեղյալ են հայտարարվել հարյուրավոր չվերթեր, արտակարգ դրություն է հայտարարվել Ալաբամայի, Միսիսիպիի եւ Լուիզիանայի նահանգներում, Մեքսիկական ծոցի նավթահարթակների բանվորները տարհանվել են, հետաձգվել է Հանրապետական կուսակցության համագումարը եւ այլն: Այս ամենի պատճառը ԱՄՆ-ի հարավարեւելյան ափերին մոտեցած «Իսահակ» արեւադարձային ծովամրրիկն է:

«Իսահակի» էպիկենտրոնը շրջանցեց Ֆլորիդայի Քի Վեսթ եւ Մայամի առողջավայրերը, բայց սաստիկ քամու եւ անձրեւների պատճառով հետաձգվեցին հարյուրավոր չվերթեր, կտրվեցին էլեկտրահաղորդման գծեր, հազարավոր տներ հոսանքազրկվեցին: Ալաբաման եւ Միսիսիպին հայտարարված են աղետյալ գոտի: Յոթ տարի առաջ մահաբեր «Կատրին» ծովամրրիկից սաստիկ տուժած Նոր Օռլեանը պատրաստ է տարհանման: Սպասվում է, որ «Իսահակն» այստեղ կհասնի երեքշաբթի կամ չորեքշաբթի:



«Իսահակի» էպիկենտրոնում քամու արագությունը կարող է հասնել ժամում 200 կիլոմետրի: Ծովամրրիկն առայժմ մոլեգնում է Մեքսիկական ծոցում: «Իսահակն» այսօր կանցնի Ֆլորիդայի Տամպա քաղաքի մոտով: Ապահովության նկատառումներով հանրապետականները որոշել են մեկ օրով հետաձգել իրենց համագումարը, որտեղ առաջադրվելու է նախագահական միասնական թեկնածու: Համագումարը ավելի շատ ձեւական բնույթ է կրում, քանզի նոյեմբերյան նախագահական ընտրություններում հանրապետականների թեկնածուն վաղուց հայտնի է՝ Միթ Ռոմնին:

«Իսահակը» իր հետեւում արդեն ավերված եւ հեղաշրջված քաղաքներ է թողել Կուբայում եւ Դոմինիկյան Հանրապետությունում: Հաիթիում 7 մարդ է զոհվել: Քամին քշել-տարել է մի հսկայական վրանաճամբար, որտեղ երկրաշարժից հետո 8000 մարդ էր բնակվում:

Պ. Ք.

ՍԽԱԼԱՇԱՏ ՏԱՐԵԳԻՐՔ

# Անհոգութեամբ եւ մասամբ նորին...

2010-ին երբ լոյս տեսաւ «Գրական Սփիւռք» տարեգիրքը, որ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան Գրականութեան ինստիտուտի եւ Սփիւռքի նախարարութեան հրատարակութիւնն էր, ողջունելով հանդերձ անոր ծնունդը, մեր յուսախաբութիւնը յայտնեցինք անոր շարք մը թերութիւնները մատնանշելով, մասնաւորապէս որ 6 խմբագիրներու անուններ կը զարդարէին զայն...

Մեր գրաւոր մեղադրանքը աննկատ չէր անցած եւ ըստ մեր լսածին ՀՀ Սփիւռքի նախարարութիւնը իրազեկ դարձած էր մեր Հալէպի «Գանձասար» շաբաթաթերթին մէջ հրատարակած գրութեան:

Անշուշտ, բոլորիս ակնկալութիւնն էր, որ յաջորդ համարը տարեգիրքին շրջանցէր մատնանշուած թերութիւնները ու աւելի աչալրջօրէն վերահսկուէր անոր նոր հրատարակութիւնը:

Վերջերս ձեռքս անցաւ երկրորդ հատորը ու մեծ հետաքրքրութեամբ թերթատեցի զայն, տեսնելու համար, որ բաւական ճոխ պարունակութիւն ունի, ըստ յիշուած անուններուն եւ նիւթերուն:

Ու սկսայ կարդալ:

Ափսո՜ս, նախկին յուսախաբութեանս վրայ եկաւ բարդուելու նոր յուսախաբութիւն մը, եւ այս անգամ աւելի՛ շեշտուած:

Քանի որ սփիւռքահայ գրականութեան նուիրուած ձեռնարկ է, ապա պարզ է, որ սփիւռքահայ գրողներ արեւմտահայերէնով հանդէս գան, եւ անշուշտ նաեւ բնական է, որ այդ գործերը արեւմտահայ-մեսրոպեան ուղղագրութեամբ տպուին: Այդպէս ալ տպուած են, սակայն ի՜նչ ահաւոր սխալներով... նոյնիսկ նախկինին սխալները գերազանցելով:

Բոլորս ալ գիտենք, որ մեր աւանդական ուղղագրութիւնը դիւրին կիրառելի չէ, ատոր համար ալ գիտակ անձի մը յանձնուելու էր այդ գրութիւնները տողաշարելու աշխատանքը, առաւել՝ խմբագրական խորհուրդին մէջ արեւմտահայերէնի հմուտ անձ մը ներգրաւուելու էր, որպէսզի հսկէր ու սրբագրէր: Սակայն...

Տպագրական, թէ ուղղագրական անհաշուելի սխալներ կան, այն աստիճան, որ կտորին ընթերցումը հաճոյքի փոխարէն տհաճութեան կը վերածեն:

Կարդացէք մէյ մը Պօղոս Գուբէլեանի վիպակը «Առաքելութիւն Մարաշ» եւ տեսէք, թէ ինչ տարօրինակ սխալներ կան, սխալներ, որոնք յաճախ, ոչ թէ արեւմտահայերէնի, այլ՝ հայերէնի՛ սխալներ են:

Ահաւասիկ կարգ մը օրինակներ.

**որոշում արի,** պէտք է ըլլայ՝ որոշում առի

**սպիտակամորդ,** պէտք է ըլլայ՝ սպիտակամորթ

**ամբոբում,** պէտք է ըլլայ՝ ամփոփում

**քրիստիոնէայ-քրիստոնիայ,** պէտք է ըլլայ՝ քրիստոնեայ

**փիլիսոբայ,** պէտք է ըլլայ՝ փիլիսոփայ

**դաստիարակութիւն ճամբուի,** պէտք է ըլլայ՝ ....... ջամբուի

**խեղթելով,** պէտք է ըլլայ՝ խեղդելով

**որձեւէք,** պէտք է ըլլայ՝ որձեւէգ

**աջալրջութիւն,** պէտք է ըլլայ՝ աչալրջութիւն

**բնօրաննէն,** պէտք է ըլլայ՝ բնօրրանէն

**ագսոր,** պէտք է ըլլայ՝ աքսոր

**ճակատակիցներ,** պէտք է ըլլայ՝ ճակատագրակիցներ

**արդած,** պէտք է ըլլայ՝ առթած

**առջեւէն գալող,** պէտք է ըլլայ՝ ...... քալող

**փետուած նաւերու,** պէտք է ըլլայ՝ ...... հաւերու

**աւազախումբեր,** պէտք է ըլլայ՝ աւազակախումբեր

եւ ասոնց նման տասնեակներ ու տասնեակներ:

Դեռ աւելի զարմանալին՝ չեմ գիտեր համակարգչային ի՞նչ «քմահաճութեամբ», տառերու միացումներով, տարօրինակ բառեր ստեղծուած են, որոնք շատ հանգիստ անցած են սրբագրիչին աչքին տակէն...

Ահա ձեզի քանի մը օրինակ.

(ւ ո)-ի միացումով, մէջտեղ եկած է անտեղի (տ) մը, ինչպէս՝ (փլանաւորած- փլանատրած): Այսպէս քանի՜ հատ, (ուս) եղած է (ոա)- (գիրքերուս-գիրքերոա) կամ՝ (նախադասութիւններով)-ը եղած է (նախադաւութիւններով)...

Միով բանիւ, ակնառու անհոգութիւն մը, անտարբերութիւն մը կար, որ կը շարունակուի, եւ որ վայել չէ ո՛չ Ակադեմիային, ո՛չ ալ Նախարարութեան:

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Քանդակագործության սիմպոզիում Մարտունի քաղաքում

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում օգոստոսի հինգից սկսվել եւ ընթանում է քանդակագործության սիմպոզիումը, որին մասնակցում են Հայաստանի Հանրապետության հանրաճանաչ վեց քանդակագործներ՝ ՀՀ նկարիչների եւ քանդակագործների միության անդամներ **Արամայիս Խլղաթյանը, Արտիկ Քոչարյանը, Գարեգին Դավթյանը, Սամվել Մարտիրոսյանը, Արմեն Վարդանյանը** եւ **Ռաֆիկ Սարգսյանը**:

Ինչպես տեղեկացրեց քանդակագործության սիմպոզիումի նախաձեռնող խմբի ղեկավար եւ մասնակից Արամայիս Խլղաթյանը՝ նախատեսված էր սիմպոզիումում ընդգրկել քանդակագործական 8 աշխատանք, սակայն ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով առայժմ ձեռնարկվել է 6 աշխատանք: Մոտ երկուսուկես մետր բարձրության բազալտե քարերն այս պահին քանդակ են դառնում արվեստագետների ձեռքերի եւ տաղանդի շնորհիվ: Ստեղծագործական աշխատանքների ընդհանուր վայր է ընտրված Մարտունու Գեղարվեստի դպրոցի բակը:

Արամայիս Խլղաթյանի ստեղծագործության թեման Կատուն է, որը պատկերվում է արթնանալու պահին: Գարեգին Դավթյանը քանդակում է Պիկասոյի հիշատակին նվիրված կոմպոզիցիոն աշխատանք, որում պատկերվում է կնոջ հետ սեր անող Մինոտավրոսը: Սամվել Մարտիրոսյանը քանդակում է մեծ կոմպոզիցիոն աշխատանք՝ երկկողմանի ֆիգուրաներով, ուր մի կողմում պատկերվում է քնած դիցուհի, մյուս կողմում՝ Մուսան խորհրդանշող քանդակագործը: Արմեն Վարդանյանը քանդակում է խայտացող ձկներ: Արտիկ Քոչարյանը քանդակում է գազանին սանձահարող մարդուն, որտեղ պատկերված գազանը խորհրդանշում է մեր հողի եւ արյան թշնամիներին, իսկ գազանին սանձահարողը՝ Վահագն Վիշապաքաղին, որը կայծակնահարում է սարսափելի գազանին: Յուրահատուկ մտահղացում է նաեւ Ռաֆիկ Սարգսյանի քանդակը, որը կրում է «Մարտունեցու Սուրբ Տիրամայր» անունը: Այն, սակայն, չի խորհրդանշում Տիրամայր Մարիամին, այլ՝ աշխատանքային եռուզեռի մեջ գտնվող մարտունեցի գեղջկուհուն: Սիմպոզիումի շրջանակներում մեկ աշխատանք էլ նվիրվելու է Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին: Այն հեղինակելու են Արտիկ Քոչարյանը, Ռաֆիկ Սարգսյանը եւ Արամայիս Խլղաթյանը:

Սիմպոզիումը կավարտվի սեպտեմբերի հինգին, որից հետո միայն վերոնշյալ երեք հեղինակները ձեռնամուխ կլինեն Արցախյան ազատամարտի մարտունեցի զոհերի հիշատակը հավերժացնող կոթողի կերտմանը: Արվեստի 6 կոթողները կհանգրվանեն Մարտունու Երեւանյան եւ Մյասնիկյան փողոցներում, Արցախյան ազատամարտի զոհերի հուշակոթողը՝ քաղաքապետարանի շենքի դիմաց, Հայրենական մեծ պատերազմի զոհերի հուշարձանի կողքին: Սիմպոզիումի կազմակերպման եւ անցկացման գործում նյութական եւ բարոյական աջակցություն են ցուցաբերել Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, Գեղհովիտի գյուղապետ Վարդան Պողոսյանը, ՀՀ Շախմատի ակադեմիայի տնօրեն Սմբատ Լպուտյանը, մարտունեցի բարերար Իշխան Բարսեղյանը, Մարտունու համայնքային միավորումը, այլ կազմակերպություններ եւ անհատ քաղաքացիներ:

Սիմպոզիումը նպատակ ունի քաղաքը հարստացնել մշակութային արժեքավոր գործերով: Այդ նպատակով հրավիրված են Հայաստանի անվանի ու տաղանդավոր քանդակագործներ Արտավազդ Քոչարյանը (Արտիկ), Ռաֆիկ Սարգսյանը, Արմեն Վարդանյանը, Գրիգոր Բաղումյանը, Գարիկ Դավթյանը, որոնց հետ միասին կաշխատեն նաեւ մարտունեցի շնորհալի ստեղծագործողներ:

Սիմպոզիումի արդյունքում Մարտունի քաղաքը կզարդարվի 8-ից 10-ը բարձրարժեք քանդակներով, որը հնարավորություն կտա մարտունեցուն հպարտանալու իր համայնքով, Սեւանի գեղատեսիլ ափը դարձնելով հյուրընկալության յուրովի անկյուն: Ստեղծվել է նախաձեռնող խումբ, որը երաշխավորում է միջոցների արդյունավետ, հրապարակային եւ թափանցիկ օգտագործումը: Նախաձեռնող խմբում են՝ Արամայիս Խլղաթյանը (նկարիչ Մայիս, գեղանկարիչ, ՀՀ նկարիչների միության անդամ), Անահիտ Գեւորգյանը (Պատկերասրահի տնօրեն, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ), Վարդան Սահակյանը (Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Երեւանի ֆիզիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Դեկարտի մրցանակակիր), Հաղթանակ Շահումյանը (Ժողովրդական նկարիչ), Դավիթ Երանոսյանը («Զանգակ» ՀՍ-ի տնօրեն), Արթուր Գասպարյանը (Մարտունու գեղարվեստի դպրոցի տնօրեն), Եղիազար Դավթյանը (Մարտունի ԻնֆոՏան համակարգող):

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# Կրտսեր ներսեսշնորհալիցիների շաբաթօրյակը Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում

Օգոստոսի 23-ին, Հայ առաքելական ուղղափառ սուրբ Եկեղեցու վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի «Ներսես Շնորհալիի» անվան մանկապատանեկան համույթը ազգանվեր նախաձեռնությամբ շաբաթօրյակ անցկացրեց Թբիլիսիի Հայոց մեծաց պանթեոնում: Համույթի անդամները, ծնողների հետ, խմբավար Մարի Աբուլյանի ղեկավարությամբ եւ «Հայարտուն» մշակույթի կենտրոնի համակարգող Լեւոն Չիդիլյանի, գեղարվեստական ղեկավար Պավել Օգանեզովի, տեխնիկական համակարգի պատասխանատու Վալերի Բադալյանի ուղեկցությամբ, ամառային հանգստի մեկ օրը տրամադրեցին հանրօգուտ աշխատանքին՝ Թբիլիսիում հանգչող ազգի մեծամեծների շիրիմների եւ տապանաքարերի մաքրմանը, պանթեոնի տարածքի բարեկարգմանը:

Հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնը մեր հպարտությունն է, վկան՝ ազգի հանճարեղ զավակների թբիլիսյան գործունեության եւ ապացույցը՝ նրանց տաղանդի: Եվ զարմանալի չէ, որ աշխարհասփյուռ հայերի Թբիլիսի այցելության առաջին ցանկությունը Խոջիվանքի պանթեոն այցելությունն է եւ խոնարհումը ազգի մեծերի շիրիմների առջեւ: Ուստի զարմանալի չէր, որ Ռուսաստանի Դաշնությունից, Բեյրութից ժամանած այցելուներին առանձնահատուկ ուրախություն պատճառեց ներսեսշնորհալիցիների կազմակերպած գեղեցիկ շաբաթօրյակը: Խանդավառված փոքրերի ոգեւորությամբ, պանթեոնի այցելուները նույնպես ընդգրկվեցին շաբաթօրյակի աշխատանքներին եւ միասին բարեկարգեցին պանթեոնի տարածքը:

Պարբերական այցելությունները հայ գրողների եւ հասարակական գործիչների Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոն յուրաքանչյուր հայի հոգու պարտքն է, իսկ այն բարեկարգ պահելու հարցը՝ թբիլիսաբնակ հայերի պարտականությունը: Շաբաթօրյակի խորհուրդը անգնահատելի է, նպատակը՝ վեհ-մատաղ սերնդին մոտեցնել ազգի պատմությանը, ներշնչել հպարտություն ազգի մեծերի նկատմամբ եւ առաջացնել պարտքի զգացում՝ պանթեոնը բարեկարգ եւ խնամված պահելու եւ այցելուներին ներկայացնելու համար:

Վիրահայոց թեմի մամլո դիվան,
պատասխանատու՝
ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Օպերային երգչուհի Վարդուհի Խաչատրյանը Մարիա Կալլասին նվիրված համերգի հյուր



Սեպտեմբերի 16-ին տեղի է ունենալու օպերային արվեստի լեգենդ Մարիա Կալլասի հիշատակին նվիրված ամենամյա համերգ, որին մասնակցելու է նաեւ շվեյցարաբնակ հայազգի օպերային երգչուհի, մեցցո սոպրանո Վարդուհի Խաչատրյանը: Նշենք, որ միջոցառումը տեղի կունենա Աթենքում Great Downtown Concert Hall-ում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո:

Հատկանշական է, որ համերգը 1974-ից ի վեր կազմակերպում է Athenaeum շահույթ չհետապնդող ընկերակցությունը: Համերգին հրավիրվում են Athenaeum-ի Grand Prix «Maria Callas» մրցանակին արժանացած կատարողները, որոնցից է Վարդուհի Խաչատրյանը: Կալլասին նվիրված համերգին նա մասնակցել է նաեւ 2009-ին: Նշենք, որ 2007-ից երգչուհին բնակվում է Շվեյցարիայում, իսկ ելույթներով հանդես է եկել մի շարք անվանի արվեստագետների հետ, այդ թվում Մոնսերատ Կաբալյեի:

Համերգին կատարելու է Տոսկայի եւ Նորմայի դերերգերը համապատասխանաբար Պուչինիի ու Բելինիի համանուն օպերաներից, իսկ համերգի 5 մասնակիցները համերգի ավարտին հանդես են գալու Վերդիի «Տրավիատայի» Բրինդիզիի կատարմամբ: Երգչուհին Կալլասի լուսանկարների, ալբոմների եւ նրա մասին գրքերի մեծ հավաքածու ունի, որը հավաքում է 14 տարեկանից:

Ս. Հ.

# Սերգեյ Սմբատյանը համաստեղ համերգով հանդես կգա

**Սեպտեմբերի 18-ին Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի դիրիժոր եւ գեղարվեստական ղեկավար Սերգեյ Սմբատյանը համաստեղ համերգով հանդես է գալու Պրահայի Ռադիո Սիմֆոնիկ Նվագախմբի հետ՝ Dvorak Prague International Music Festival միջազգային երաժշտական փառատոնի շրջանակներում: Ծրագրում հնչելու են Բեռլիոզի «Հռոմեական դիմակահանդեսը», Չայկովսկու ջութակի եւ նվագախմբի համար գրված կոնցերտը եւ Ռավելի «Վալսը», իսկ համերգի մենակատարը լինելու է Վիլդե Ֆրանգը:**

**Նշենք, որ Պրահայի ռադիո սիմֆոնիկ նվագախումբը հիմնադրվել է 1924 թվականին, իսկ 1945 թվականին վերածվել է մեծ սիմֆոնիկ նվագախմբի:**



**Ընդգծենք, որ առաջին անգամ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը համերգներ կունենա Արցախում:**

Ս. Հ.

# Արթուր Աբրահամը այս անգամ հիացրեց իր երկրպագուներին

Որոշ ընդմիջումից հետո Արթուր Աբրահամը կրկին նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Բեռլինում կայացած բավականին հետաքրքրական եւ անզիջում մրցապայքարում հայ բռնցքամարտիկը միավորներով հաղթեց 2-րդ միջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի գործող չեմպիոն Ռոբերտ Շտիգլիցին ու տիրեց նրա չեմպիոնական գոտուն:



Արթուրը բավականին վստահ անցկացրեց ողջ մենամարտը` առաջին իսկ ռաունդներից գրոհելով մրցակցին, փորձելով հուժկու հարվածներով ծնկի բերել նրան: Իսկ հարկ եղած դեպքում Աբրահամը հմտորեն էր պաշտպանվում` խուսափելով Շտիգլիցի վտանգավոր հարվածներից: Պետք է արժանին մատուցել նաեւ Շտիգլիցին, որը թեեւ հոնքի պատռվածքին, մինչեւ վերջ դիմացավ Աբրահամի հարվածներին: Բոլոր երեք մրցավարներն էլ միավորներով (116-112, 116-112, 115-113) հաղթանակը շնորհեցին Արթուր Աբրահամին, որը քաշային 2-րդ կարգում էլ ուժեղագույնը ճանաչվեց: Հիշեցնենք, որ ժամանակին Արթուրը միջինքաշային կարգում IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնն էր ու հրաժարվեց չեմպիոնական գոտուց քաշային այլ կարգ տեղափոխվելու պատճառով:

«Շատ հպարտ ու երջանիկ եմ 2-րդ միջինքաշային կարգում աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու առիթով: Դա իմ երազանքն էր: Վերջին 2 տարիներին մի քանի անհաջողությունների մատնվեցի, բայց փորձ ձեռք բերեցի: Հաղթեցի շատ ուժեղ մրցակցի, այն էլ միավորներով: Իսկ շատերը կարծում էին, որ միայն նոկաուտով է հնարավոր հաղթել Շտիգլիցին: Երկուսս էլ պայքարեցինք մինչեւ վերջ: Նա չէր ցանկանում զրկվել իր տիտղոսից, իսկ ես տենչում էի այն նվաճել: Շատ ծանր մենամարտ ստացվեց: Երկուսս էլ մեր հնարավորությունները մինչեւ վերջ դրսեւորեցինք: Ի տարբերություն ամերիկացիների, որոնք սովորաբար միմյանց վիրավորում են, մենք մենամարտից հետո էլ մարդկային հարաբերությունները կշարունակենք:

Շատ լավ էի պատրաստվել այս մենամարտին: Շատ կարեւոր էր, որ ճիշտ մարտավարություն էինք ընտրել ու այն իրեն արդարացրեց: Մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում: Շնորհակալ եմ հարազատներիս, Հայաստանից ժամանած երկրպագուներիս մեծ բանակին, որոնք մենամարտի ընթացքում աջակցեցին ինձ», մենամարտից հետո նշել է **Արթուր Աբրահամը**:

«Շնորհավորում եմ Արթուրին հաղթանակի առթիվ: Շատ սխալներ թույլ տվեցի: 7-րդ ռաունդից սկսած հոնքի պատռվածքի պատճառով ձախ աչքս լավ չէր տեսնում: Չնայած դրան, շարունակեցի մենամարտել, սակայն դա արդեն այլ բռնցքամարտ էր», նշել է **Ռոբերտ Շտիգլիցը**:

Արթուր Աբրահամը իր չեմպիոնական գոտու պաշտպանությունը կիրականացնի դեկտեմբերի 15-ին: Մրցակիցն առայժմ հայտնի չէ: Ճիշտ է, մինչեւ Շտիգլիցի հետ մենամարտը հաղթողի հետ մրցելու ցանկություն էր հայտնել Ֆելիքս Շտուրմը: WBA-ի վարկածով միջինքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոնը սեպտեմբերի 1-ին մրցելու է IBF-ի վարկածով չեմպիոնական գոտու տեր Դանիել Գիլի հետ: Շտուրմը պատրաստ է տեղափոխվել 2-րդ միջինքաշային կարգ, որպեսզի մենամարտի Արթուրի հետ:

# Հայկ Մարտիրոսյանը կրկին ուժեղագույնն է Եվրոպայում

*Պետրոսյանն ու Գաբուզյանը Եվրոպայի փոխչեմպիոններ*

Պրահայում ավարտված շախմատի Եվրոպայի պատանեկան առաջնությունում հաջող հանդես եկան Հայաստանի շախմատիստները: Մեր հանրապետությունը ներկայացրած 24 շախմատիստներից 3-ը դարձան մրցանակակիրներ: Մինչեւ 12 տարեկան պատանիների մրցաշարում գերազանց ելույթ ունեցավ **Հայկ Մարտիրոսյանը**: 8-րդ տուրում հաղթելով սլովակ Երգուս Պեչակին, Հայկը 8-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց ու ժամկետից շուտ նվաճեց Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը: 9-րդ տուրում նա արագ ոչ-ոքի ավարտեց հանդիպումը Սերգեյ Լոբանովի հետ: Համոզված ենք, որ անհրաժեշտության դեպքում պատանի շախմատիստը կհաղթեր նաեւ ավարտական տուրում: Նա մեկ միավորով գերազանցեց 2-րդ տեղը գրաված Ալեքսեյ Սարանային: Այսպիսով, Հայկ Մարտիրոսյանը 9 հնարավորից վաստակած 8,5 միավորով 2-րդ տարին անընդմեջ հռչակվեց Եվրոպայի չեմպիոն մինչեւ 12 տարեկանների մրցաշարում: Ինչ խոսք, այս հաղթանակի շնորհիվ ՖԻԴԵ-ի վարպետը զգալիորեն կավելացնի իր վարկանիշը, որը ներկայումս 2019 է:

Պրահայում մեր հատուկ թղթակից **Հակոբ Ասատրյանի** հետ զրույցում Հայկը ուրախությամբ նշեց, որ իր համար հաջող ընթացան բոլոր հանդիպումները եւ ինքը հասավ իր նպատակին: Բայց իբրեւ հեռահար նպատակ, նրա ցանկությունն է դառնալ Լեւոն Արոնյանի նման շախմատիստ:




Մինչեւ 14 տարեկան տղաների մրցաշարում **Մանուել Պետրոսյանը** դարձավ Եվրոպայի փոխչեմպիոն: Ավարտական 2 տուրերում նա հաղթեց Ռադոսլավ Գայեկին ու հաշտություն կնքեց Գեորգի Սիբաշվիլու հետ եւ 7 միավորով գրավեց 2-րդ տեղը: Մանուելն արծաթե մեդալի արժանացավ` լրացուցիչ գործակիցներով առաջ անցնելով 7-ական միավոր վաստակած Գեորգի Սիբաշվիլուց, Բենց Կորպայից, Մաքսիմ Վավուլինից եւ Դավիթ Պառավյանից: Իսկ Եվրոպայի չեմպիոն հռչակվեց 8 միավոր վաստակած լեհ Յան- Կժիժտոֆ Դուդան:

Հայաստանին 2-րդ արծաթե մեդալը պարգեւեց մինչեւ 18 տարեկանների մրցաշարում հանդես եկած **Հովհաննես Գաբուզյանը**: 8-րդ տուրում հայ շախմատիստը հաղթեց Ջուլես Մուսարդին, սակայն ավարտական տուրում պարտվեց Դանիել Ֆորուենին: Այդ պարտությունը ճակատագրական եղավ Գաբուզյանի համար, որը 7 միավորով բավարարվեց 2-րդ տեղով: Այլապես նա կարող էր չեմպիոն հռչակվել: Ոսկե մեդալի արժանացած ռուսաստանցի Վադիմ Մոիսեենկոն Գաբուզյանին գերազանցեց ընդամենը կես միավորով: Հիշեցնենք, որ անցյալ տարի էլ Գաբուզյանն արծաթե մեդալ էր նվաճել մինչեւ 16 տարեկանների Եվրոպայի առաջնությունում:

Մրցանակային տեղին մոտ էր մինչեւ 16 տարեկանների մրցաշարում հանդես եկող **Տիգրան Հարությունյանը**: Հաղթելով Լատասա Սանթոսին ու հաշտություն կնքելով Նիկո Գեորգիադիսի հետ, Տիգրանը վաստակեց 7 միավոր ու գրավեց 4-րդ տեղը: Նա միայն լրացուցիչ գործակիցներով արծաթե եւ բրոնզե մեդալները զիջեց նույնպիսի արդյունքների հասած խորվաթ Ավիթալ Բորուչովսկուն եւ լիտվացի Թոմաս Լաուրուսասին: Իսկ չեմպիոն դարձավ 8 միավոր վաստակած լեհ Կասպեր Դրոզդովսկին:

Աղջիկների մրցաշարում մեդալի հավակնորդ էր **Մարիա Գեւորգյանը**, որն անցյալ տարի մինչեւ 18 տարեկանների մրցաշարում բրոնզե մեդալ էր նվաճել: Սակայն այս անգամ նա անհաջող խաղաց վերջնագծում: Ավարտական 4 տուրերում Մարիան միայն կես միավոր վաստակեց եւ 5 միավորով զբաղեցրեց 20-րդ տեղը:

Հայ շախմատիստուհիներից լավագույն արդյունքի հասան **Քրիստինե Սմբատյանն** ու **Անի Հարությունյանը**, որոնք վաստակեցին 6-ական միավոր: Անին մինչեւ 16 տարեկանների մրցաշարում գրավեց 11-րդ տեղը, Քրիստինեն 19-րդն էր մինչեւ 10 տարեկանների մրցաշարում:

Հաջող պետք է համարել նաեւ **Շանթ Սարգսյանի** ելույթը, որը 6,5 միավորով 6-րդ տեղը զբաղեցրեց մինչեւ 10 տարեկանների մրցաշարում: **Արամ Հակոբյանն** էլ նույնպիսի արդյունքով հանգրվանեց 7-րդ հորիզոնականում մինչեւ 12 տարեկանների մրցավեճում:

Գնահատելով մեր պատանիների մասնակցությունը, պատանեկան հավաքականի ավագ մարզիչ, օլիմպիական կրկնակի չեմպիոն **Արտաշես Մինասյանը** նշեց, որ ընդհանուր առմամբ գոհ է մեր պատանիների ելույթներից եւ հույս ունի, որ ապագայում մեր աղջիկները նույնպես կգրավեն մրցանակային տեղեր:

### ՖՈՒՏԲՈԼ

# Մխիթարյանի հերթական գոլը

**Դոնեցկի «Շախտյորի» կազմում իր արդյունավետ խաղն է շարունակում Հենրիխ Մխիթարյանը: Առաջնության 7-րդ տուրում հյուրընկալելով «Կարպատներին», «Շախտյորը» հաղթեց 3-0 հաշվով: 3-րդ գոլն իր օգտին գրանցեց Մխիթարյանը, որը 11 գնդակով վստահորեն գլխավորում է առաջնության լավագույն ռմբարկուների ցանկը: Նրան հետապնդող Կիեւի դինամոյական Բրայան Իդեեն խփել է 7 գոլ:**

**7-րդ տուրում աչքի ընկավ նաեւ Գեւորգ Ղազարյանը` բացելով Զապորոժիեի «Մետալուրգի» հետ խաղի հաշիվը: Դոնեցկի «Մետալուրգը» հաղթեց 2-1 հաշվով:**

# Մեկնեցին Ստամբուլ

**Երեկ շախմատի Հայաստանի տղամարդկանց եւ կանանց հավաքականները մեկնեցին Ստամբուլ, որտեղ այսօր կտրվի համաշխարհային 40-րդ օլիմպիադայի մեկնարկը: Տղամարդկանց հավաքականի կազմում հանդես կգան Լեւոն Արոնյանը, Սերգեյ Մովսիսյանը, Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանն ու Տիգրան Պետրոսյանը: Օլիմպիական կրկնակի չեմպիոն Հայաստանի հավաքականն այս անգամ էլ հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկն է:**

**Կանանց հավաքականի կազմում Հայաստանի մարզական պատիվը կպաշտպանեն Էլինա Դանիելյանը, Լիլիթ Մկրտչյանը, Լիլիթ Գալոյանը, Մարիա Կուրսովան եւ Աննա Հայրապետյանը:**

# Հովհաննիսյանը հաղթողին զիջեց լրացուցիչ գործակիցներով

**Սանկտ Պետերբուրգում անցկացվող Միխայիլ Բոտվիննիկի հուշամրցաշարի շրջանակներում շախմատիստները նախ հարաբերությունները պարզեցին կայծակնային մրցախաղում: Հայ շախմատիստներից հաջող հանդես եկավ Ռոբերտ Հովհաննիսյանը, որը 11 հնարավորից վաստակած 9 միավորով գրավեց 2-րդ տեղը: Նա միայն լրացուցիչ գործակիցներով զիջեց նույնպիսի արդյունքների հասած Եվգենի Ալեքսեեւին, որը դարձավ մրցաշարի հաղթող:**



**Զավեն Անդրեասյանը** 8 միավորով գրավեց 7-րդ տեղը: **Ավետիք Գրիգորյանը** 7 միավորով 20-րդն էր: Նույնպիսի արդյունքով **Վահե Բաղդասարյանը** 28-րդ տեղը գրավեց: **Վլադիմիր Պողոսյանը** 4 միավորով 110-րդն էր, **Համազասպ Վարդանյանը** 3,5 միավորով` 113-րդը: Կայծակնային մրցախաղին մասնակցեցին 130 շախմատիստներ:

**Բոտվիննիկի հուշամրցաշարում անցկացված 2 տուրից հետո հայ շախմատիստներից 1,5-ական միավոր են վաստակել Ռոբերտ Հովհաննիսյանը, Զավեն Անդրեասյանը, Ավետիք Գրիգորյանն ու Վահե Բաղդասարյանը: Վլադիմիր Պողոսյանն ունի 1 միավոր, Համազասպ Վարդանյանը` կես միավոր:**

# «Շիրակի» հաղթարշավն ընդհատվեց

**Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 20-րդ տուրում միանձնյա առաջատար «Միկան» ավելի ամրապնդեց իր դիրքը` 1-0 հաշվով հաղթելով «Փյունիկին»: Վերջինիս համար ճակատագրական եղավ 48-րդ րոպեն, երբ անկյունայինի խաղարկումից հետո «Փյունիկի» պաշտպան Արման Հովհաննիսյանն անսպասելիորեն ձեռքով խաղաց: Նշանակված 11 մ հարվածը հստակ իրացրեց «Միկայի» ավագ Աղվան Մկրտչյանը, որն այդ օրը բարձրագույն խմբում հոբելյանական` 250-րդ հանդիպումն էր անցկացնում:**

**«Միկային» հետապնդող Գյումրիի «Շիրակը», որը 8 անընդմեջ հաղթանակ էր տոնել, չկարողացավ շարունակել հաղթարշավը: Գյումրեցիները 2 կարեւոր միավոր կորցրեցին Կապանում:**

**«Գանձասարի» հետ խաղում շիրակցիների կազմում վնասվածքների պատճառով բացակայում էր Լամին Լի Յորնը: Չնայած դրան, գյումրեցիներն առաջինը հասան հաջողության: Տուգանայինի խաղարկումից հետո Բորիս Կադիո Դիդիեն գլխի հարվածով գնդակն ուղարկեց դարպասը: Սակայն հաղթական հաշիվը պահպանել չհաջողվեց: Շուտով Դիեգո Լոմբան վերականգնեց հավասարակշռությունը` 1-1:**

**Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում 2 հետնապահների` «Բանանցի» ու «Արարատի» խաղը: Սակայն «Արարատին» էլ չհաջողվեց պահպանել հաղթական հաշիվը: Դավիթ Սուջյանը «Բանանցին» փրկեց հերթական պարտությունից:**

**Երկրի չեմպիոն «Ուլիսին» ոչ մի կերպ չի հաջողվում կարգավորել խաղը: 20-րդ տուրում թիմը հերթական պարտությունը կրեց «Իմպուլսից»` 0-2: Աչքի ընկան Նարեկ Դավթյանն ու Հովհաննես Վերանյանը:**

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Միկա | 20 | 15 | 2 | 3 | 35-19 | 47 |
| 2. Շիրակ | 19 | 13 | 3 | 3 | 33-17 | 42 |
| 3. Իմպուլս | 20 | 11 | 2 | 7 | 34-29 | 35 |
| 4. Գանձասար | 19 | 8 | 5 | 6 | 23-16 | 29 |
| 5. Փյունիկ | 19 | 8 | 3 | 8 | 36-27 | 27 |
| 6. Ուլիս | 20 | 5 | 4 | 11 | 23-30 | 19 |
| 7. Բանանց | 19 | 3 | 5 | 11 | 19-32 | 14 |
| 8. Արարատ | 20 | 2 | 2 | 16 | 12-45 | 8 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 11 |
| Վիուլեն Այվազյան | «Փյունիկ» | 9 |
| Լամին Լի Յորն | «Շիրակ» | 9 |
| Ֆոֆանա Բեկո | «Շիրակ» | 8 |
| Կամո Հովհաննիսյան | «Փյունիկ» | 8 |
| Սեմյոն Մուրադյան | «Միկա» | 8 |

# Այս անգամ` խոշոր հաշվով

**Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը Թբիլիսիում անցկացրած ընկերական 2-րդ մրցախաղում էլ զիջեց Վրաստանի իր հասակակիցներին: Այս անգամ գրանցվեց խոշոր հաշիվ` 4-0:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Դավութօղլուն լիազորությունները գերազանցե՞լ է

*1-ին էջից*

**Ըստ երեւույթին, Գյուլի «հիվանդությունը» քաղաքական է, ուստի քչերն են դրան կարեւորություն տալիս: Իսկ Regnum-ի մեկնաբան Տարասովը բացահայտ կարծիք է հայտնել, որ Գյուլը «հիվանդացել է, որպեսզի Թեհրան չմեկնի»: Երկրորդ անսպասելին Թուրքիայի արտգործնախարար Դավութօղլուի կոշտ եւ անհիմն հայտարարությունն էր Լեռնային Ղարաբաղի խնդրի «լուծման» շուրջը, որին հետեւեց Ստամբուլում «հայ-ադրբեջանական բանակցություններ կազմակերպելու» Թուրքիայի առաջարկությունը:**

**Բիշքեկում է ստորագրվել ԼՂ հակամարտության գոտում ռազմական գործողությունները դադարեցնելու բազմակողմ հռչակագիրը, որին լիիրավ կողմ է ԼՂՀ-ն: Եվ երբ փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանը Դավութօղլուի հայտարարությունը գնահատել է իբրեւ վերջինիս կողմից միջազգային իրավունքի բնագավառի գիտելիքների զրոյացում, ամենայն հավանականությամբ նկատի է ունեցել առաջին հերթին այն, որ ԼՂ խնդրի կարգավորման ամենաարդյունավետ եւ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ներգրվող տարբերակը Բաքու-Ստեփանակերտ ուղղակի բանակցություններն են:**

**Ընդ որում, միջազգային պրակտիկայում ընդունված չէ այլ ձեւաչափի հանդիպումներում անդրադառնալ տվյալ օրակարգին չառնչվող խնդիրների. ԼՂ հարցի չկարգավորվածությունը խոչընդոտ չէ թուրքախոս երկրների համագործակցության կայացմանը եւ խորացմանը: Հակառակ դեպքում նման ֆորմատ ընդհանրապես չէր ձեւավորվի: Ինչպես նաեւ՝ թուրքախոս երկրների «չհամագործակցությունը» պայմանավորված չէ ԼՂ խնդրի «կարգավորվածությամբ»: Այլապես հարկ կլինի արձանագրել, որ այդ երկրները համագործակցության են նպատակադրվում՝ ի վնաս ԼՂՀ-ի, Հայաստանի եւ ողջ հայ ժողովրդի շահերի: Իսկ դա արդեն բոլորովին այլ «ռեպերտուար» է, ինչին ուշադրություն պետք է դարձնի միջազգային հանրությունը:**

**Թուրքիայում հռչակված «նեոօսմանիզմն» ակնհայտորեն ճգնաժամ է ապրում: Պաշտոնական Անկարան, չնայած ջղաձիգ ջանքերին, ակնկալած աշխարհաքաղաքական դերակատարություն չի ստանում: Ավելին, այսօր Թուրքիան գրեթե բոլոր հարեւանների հետ լարված հարաբերություններ ունի, գումարած՝ որ չափազանց հրատապ է դարձել քրդական հարցը: Ստեղծված իրավիճակում հուսալ, որ Անկարային կհաջողվի «առաջ մղել ԼՂ կարգավորման գործընթացը», ինչպես կարծում է իշխող կուսակցությունից ադրբեջանցի մեջլիսական Մուսա Գասըմլին, կամ չափազանցված լավատեսություն է, կամ թուրք-ադրբեջանական հարաբերություններում վստահության պակասը քողարկելու անհաջող փորձ:**

**Ամենայն հավանականությամբ, գործ ունենք երկրորդ հանգամանքի հետ: Նման եզրահանգման է մղում փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանի՝ վերեւում նշված, գնահատականի դեմ ադրբեջանական կողմից ուղղորդված քարոզչությունը, որտեղ տրամաբանությունը փոխարինված է մերկապարանոց-ցածրակարգ հարձակումներով եւ անձնական բնույթի վերագրումներով: Բայց դա դեռ ամբողջը չէ: Ադրբեջանական պաշտոնական աղբյուրները եւ վերլուծաբանական հանրությունը բացահայտ անուշադրության են մատնել Ստամբուլում «հայ-ադրբեջանական բանակցություններ կազմակերպելու» Դավութօղլուի առաջարկությունը: Տպավորությունն այնպիսին է, որ հարեւան երկրում լսել են միայն Դավութօղլուի բիշքեկյան հայտարարությունը, իսկ երկրորդը տեղ չի գտել ադրբեջանական դիվանագիտության հիշողության մեջ:**

**Խնդիրն այն չէ, որ Դավութօղլուի առաջարկությունը հայկական կողմի համար անընդունելի է: Իհարկե այդպես է: Բայց ինչո՞ւ է լռում Բաքուն: Չի ուզում «ծանր տեղը թեթեւանա՞լ»: Նախ, դա հարեւան երկրի դիվանագիտությանը յուրահատուկ չէ: Երկրորդ, նման դեպքերի համար իշխանությունը «բուծած ունի» քաղաքագետների եւ վերլուծաբանների մի ամբողջ «կոհորտա»՝ նախկին պետխորհրդական Վաֆա Գուլուզադեի «նահապետությամբ», որը սնուցվում-փայփայվում է, որ ասի այն, ինչ ԱԳՆ-ն իր «մակարդակից ցածր է» համարում: Մինչդեռ «կոհորտան» նույնպես լռում է: Նա ակնհայտորեն դեռեւս չի հրահանգավորվել:**

**Regnum-ը, հղում անելով իր լավատեղյակ աղբյուրներին, վկայակոչում է Դավութօղլուի «անսպասելի անկեղծացումը», թե «տառացիորեն աղերսել է հայկական կողմին՝ Ադրբեջանին «վերադարձնել» (չակերտները մերն են- Վ. Ա.) գոնե մի շրջան, որից հետո կհամոզի Իլհամ Ալիեւին՝ Հայաստանի հետ ստորագրել պատերազմական իրավիճակին վերջ դնող համաձայնագիր, ինչից հետո կբացվեին սահմանները, կվերականգնվեր հաղորդակցությունը»: Որքանո՞վ է հավաստի ռուսաստանյան լրատվամիջոցի մեջբերումը՝ դժվար է դատել: Սկզբունքայինը Regnum-ի մեկնաբանի եզրահանգումն է, որ «առաջարկության ձախողման դեպքում Թուրքիան Արեւմուտքին (՞- Վ. Ա.) եւ Ադրբեջանին մեղադրելու առիթ կունենա, որպեսզի դրայֆ կատարի դեպի Ռուսաստան՝ տարածաշրջանային լուրջ խաղացող մնալու համար»:**

**Գուցե Իլհամ Ալիեւը արդեն ավելի մեծ սպասելիքնե՞ր ունի: Գուցե «գտել է» ավելի վստահելի երաշխավո՞ր, իսկ Դավութօղլուն պարզապես գերազանցե՞լ է Ադրբեջանից ունեցած լիազորությունները:**

Ի փոփոխություն 23.08.2012թ.-ին «ԱԶԳ» օրաթերթում լույս տեսած հրապարակային ծանուցման, տեղեկացնում ենք, որ վերոհիշյալ ծանուցման մեջ ներկայացված լոտերի մեկնարկային գները հետեւյալներն են՝

Լոտ 1. 7500000 ՀՀ դրամ

Լոտ 2. 28000000 ՀՀ դրամ:

Լոտ 3. 22000000 ՀՀ դրամ:

Գույքի ամբողջական նկարագրությանը, ինչպես նա աճուրդի անցկացման կանոնակարգին  պայմաններին կարող եք ծանոթանալ դիմելով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե, այցելելով **www.borsa.am** կամ զանգահարելով (010) 56-52-28:

# Վրաստանում վերապատրաստվել են տեղի հայ ուսուցիչները

Հայաստանի ու Վրաստանի կրթության ու գիտության նախարարությունները ստորագրել են հուշագիր, ըստ որի՝ ՀՀ կրթության ու գիտության նախարարությունը շարունակում է իրականացնել Վրաստանում գործող հայկական կրթօջախների ուսուցիչների վերապատրաստումը:

2012-ին ուսուցիչները վերապատրաստվել են բնագիտամաթեմատիկական առարկաների գծով, իսկ վերապատրաստումն իրականացրել են Կրթության ազգային ինստիտուտի մասնագետները Վրաստանի Քութայիսի քաղաքի Զուրաբ Ժվանիայի անվան պետական կառավարման դպրոցում՝ օգոստոսի 16-20-ը: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են հայկական դպրոցների 48 ուսուցիչներ:

Վրաստանում հայ մանկավարժների վերապատրաստման դասընթացներ առաջին անգամ կազմակերպվել են 2010-ին ու ամենամյա պարբերականությամբ շարունակվում են մինչեւ հիմա: Նախորդ 2 տարիներին վերապատրաստվել է «Հայոց լեզու եւ գրականություն», «Հայոց պատմություն» առարկաների ու տարրական դասարանների 192 ուսուցիչ:

**Ի. Պ.**



## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տ.Մեծի 51/2 | Կաթսայատուն | 227 | 203 | 25,700,000 |
| 2 | Բագրատունյաց 49 | Կաթսայատուն | 237 | 237 | 24,400,000 |
| 3 | Դավթաշեն 2-րդ թաղ. ԿԶՀ 2 | կաթսայատուն | 371 | 333 | 11,200,000 |
| 4 | Մ.Խորենացի 30 | կաթսայատուն | 157 | 128 | 20,770,000 |
| 5 | Սասունցի Դավիթ 13 | կաթսայատուն | 123 | 123 | 13,400,000 |
| 6 | Այասի փողոց թիվ 1/3 | կաթսայատուն | 415 | 306 | 25,000,000 |
| 7 | Ուլնեցու փողոց 3-րդ փակ. 4/2 | կաթսայատուն | 249 | 130 | 14,650,000 |
| 8 | Տիգրան Մեծի 26 | կաթսայատուն | 305 | 261 | 37,740,000 |
| 9 | Չարենցի փողոց 76/6 | կաթսայատուն | 55 | 42 | 10,300,000 |
| 10 | Հ Հակոբյան 1/7 | կաթսայատուն | 109 | 109 | 30,870,000 |
| 11 | Մամիկոնյանց փող. 56/9 | կաթսայատուն | 218 | 261 | 45,770,000 |
| 12 | Ռուբինյանց 2/13 | կաթսայատուն | 304 | 304 | 18,515,000 |
| 13 | Բաղրամյան պող. 25 | կաթսայատուն | 216 | 188 | 38,910,000 |
| 14 | Աբովյան 62շ. 31 տարածք | ոչ բնակելի տարածք | | 41 | 12,850,000 |
| 15 | Արշակունյաց 6 | ոչ բնակելի տարածք | | 63 | 5,100,000 |
| 16 | Ռայնիսի փողոց 26/3 | կաթսայատուն | 240.75 | 240.75 | 7,100,000 |
| 17 | Մոլդովական փողոց 50/9 | կաթսայատուն | 192.66 | 163.10 | 12,230,000 |
| 18 | Խորենացի 47 | կաթսայատուն | 144.00 | 144.00 | 11,820,000 |
| 19 | Նորաշխարհյան 17/9 | կաթսայատուն | 238.12 | 238.12 | 11,950,000 |
| 20 | Մամիկոնյանց 1/3 | կաթսայատուն | 307.20 | 280.90 | 29,270,000 |
| 21 | Կուրղինյան 5/3 | կաթսայատուն | 162.97 | 135.50 | 11,090,000 |
| 22 | Սեբաստիա 18/2 | կաթսայատուն | 194.83 | 173.00 | 11,320,000 |
| 23 | Օհանովի 58/1 | կաթսայատուն | 307.50 | 283.85 | 17,200,000 |
| 24 | Սաֆարյան 16/4 կաթսայատուն | կաթսայատուն | 306.25 | 288.00 | 15,260,000 |
| 25 | Բաշինջաղյան փող.հ.185/1 | կաթսայատուն | 321.07 | 270.40 | 10,500,000 |
| 26 | Գալշոյան 19/1 | կաթսայատուն | 159.96 | 137.40 | 9,525,000 |
| 27 | Աթոյան անց., հ11/2 | կաթսայատուն | 436.00 | 436.00 | 19,350,000 |
| 28 | Խաղաղ Դոնի 12/8 | կաթսայատուն | 163.80 | 163.80 | 8,250,000 |
| 29 | Ճառագայթային փող., 136/1 | կաթսայատուն | 316.25 | 282.90 | 17,025,000 |
| 30 | Իսակովի պող., 52/27 | կաթսայատուն | 158.76 | 158.76 | 6,600,000 |
| 31 | Շահվերդյան 18, ԿԶՀ 31 | կաթսայատուն | 254.27 | 236.60 | 19,950,000 |
| 32 | Շիրակի 56 | կաթսայատուն | 255.38 | 228.80 | 6,075,000 |
| 33 | Վիլնյուսի փող.,67/2 | կաթսայատուն | 242.50 | 212.75 | 6,300,000 |
| 34 | Կաթսայատուն, Արծրունու փող. 16/2 | կաթսայատուն | 138.00 | 115.70 | 6,450,000 |
| 35 | Նոր-Նորք 8-րդ մ/շ 17/4 | կաթսայատուն | 241.25 | 210.40 | 7,650,000 |
| 36 | Գաջեգործների 74/2 | կաթսայատուն | 125.05 | 125.05 | 3,798,000 |
| 37 | Չարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2,251.36 | 1,244.00 | 448,875,000 |
| 38 | Վիլնյուսի փող. Թիվ 91/2 | կաթսայատուն | 243.18 | 218.30 | 13,365,000 |
| 39 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 12,600,000 |
| 40 | Ռուբինյանց փողոց թիվ6/5 | կաթսայատուն | 353.75 | 344.65 | 13,707,000 |
| 41 | Կաթսայատուն Նոր Արեշի 1/25 | կաթսայատուն | 195.50 | 195.50 | 8,880,300 |
| 42 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 29,605,500 |
| 43 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328.00 | 328.00 | 9,083,700 |
| 44 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 20,295,000 |
| 45 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 12,892,500 |
| 46 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.30 | 262.30 | 8,060,400 |
| 47 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161.00 | 161.00 | 10,319,400 |
| 48 | Տիտոգրադյան փող. 14/6 | կաթսայատուն | 175.75 | 175.80 | 11,401,200 |
| 49 | Խաղաղ Դոնի 31/12 | կաթսայատուն | 308.75 | 308.75 | 17,631,900 |
| 50 | Բաշինջաղյան փողոց հ.187/6, հ.1 ԿԶՀ | կաթսայատուն | 297.49 | 297.40 | 15,390,000 |
| 51 | ԿԶՀ հ.35 Արարատյան 1 | կաթսայատուն | 233.02 | 205.10 | 7,677,000 |
| 52 | Կոմիտասի պող. 7/12 | կաթսայատուն | 333.46 | 275.30 | 24,075,000 |
| 53 | Աղոնցի փող. Հ.17/6 | կաթսայատուն | 231.80 | 218.60 | 17,667,000 |
| 54 | Աղոնցի փող. Հ.13/10 | կաթսայատուն | 241.80 | 211.00 | 16,884,000 |
| 55 | Խաղաղ Դոնի փող. 27/4 | կաթսայատուն | 307.44 | 342.50 | 22,855,500 |
| 56 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.10 | 22,732,200 |
| 57 | Հալաբյան 27շ. 75 տարածք | ոչ բնակելի տարածք | | 57 | 3,780,000 |
| 58 | Զաքյան փողոց 1շենք 38 տարածք | ոչ բնակելի տարածք | | 58 | 10,863,000 |
| 59 | Քաջազնունու փողոց 11 շենք 111 շին. | ոչ բնակելի տարածք | | 351 | 15,750,000 |
| 60 | Ե. Քոչար 9 | ոչ բնակելի տարածք | | 231 | 34,380,000 |
| 61 | Ե. Քոչար 9 | ոչ բնակելի տարածք | | 199 | 28,800,000 |
| 62 | Ե. Քոչար 9 | ոչ բնակելի տարածք | | 60 | 9,000,000 |
| 63 | Կողբացի 2ա 93 ոչ բն. Տարածք | ոչ բնակելի տարածք | | 24 | 1,593,000 |
| 64 | Ագաթանգեղոսի 29 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 16 | 10,530,000 |
| 65 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.8 | 4,122,000 |
| 66 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.8 | 8,770,500 |
| 67 | Թումանյան 1անց 28 շենք | ոչ բնակելի տարածք | | 24 | 4,500,000 |
| 68 | Իսակովի պող 36/1 19,շին | ոչ բնակելի տարածք | | 39.9 | 4,815,000 |
| 69 | Թումանյան 11 շ 72 տարածք | ոչ բնակելի տարածք | | 10.3 | 1,030,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ սեպտեմբերի 12-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2012թ սեպտեմբերի 12-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 24.8.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: